

Ազգային երգը

Ազգային երգը մեր գոյատևման լաւագոյն երաշխիքն է

Վ.Թենպէլեան



Նոր չէ մտահոգութիւնը: Երբեմն տազնապի ուժգնութեամբ, իսկ երբեմն ակնարկներով նշած է այն ցաւալի իրողութիւնը, որ հայ երգը մի տազնապ է ապրում: Այս տազնապը դրսևորում է իր զանազան կողմերով:

Առաջին պատճառը Հայաստանից Սփիւռք փոխանցւած վատերական երգերի զգալի նահանջն է: Վատերական՝ ոչ թէ դասական երգերի հասկացողութեամբ, այլ՝ էստրադային եւ ժողովրդական խնամւած երգերի իմաստով: Հայաստանում եւս, դժբախտաբար, նշմարելի է թրքամտութիւն, եւ այսօր ամենից ատելի տարածում գտած երգերը՝ հայերէն բառերով հարազատ թուրքերէն երգերն են: Ռաբիգ որակումը ժողովրդականին առնչելը՝ անհեթեթութիւն է: Հայաստանեան ռաբիգը ատելի՝ թրքաբարոյ է, քան սփիւռքեան շարքիները: Կարճ ասած՝ Հայաստանը հայ երգի աւիւնը Սփիւռքին փոխանցելուց դադարել է: Իհարկէ կան բացառութիւններ, սակայն նրանք այնքան քիչ են, որ չեն կարող ազդել հոսանքի վրայ:

Ինչ վերաբերում է Սփիւռքին՝ աշխարհով տարածւած հայութիւնը բնականաբար պէտք է ազդի իր շրջապատից: Չարմանալի չպէտք է լինի, եթէ հայ երգը Ֆրանսիականի, անգլիականի, ամերիկեանի, յունականի, արաբականի եւ իտալականի ազդեցութիւնը կրի. այդ շարքը դեռ կարելի է շարունակել: Բայց զարմանալիօրէն, ազգային աղէտի համազօր տարողութեամբ, հայ երգն ամենից շատ թուրքականի ազդեցութիւնն է կրում: Մի շատ մեծ բարիք կը լինի հայ ժողովրդին, եթէ հոգեբանները, ընկերաբանները, մարդաբաններն ու պատմաբանները փորձեն ճիշտ ախտորոշում կատարել, թէ ինչու՝ ջարդի ենթարկւած եւ տեղահանուած հայը իր մէջ թրքամտութեան հիւանդութիւնն է պահում, մի հիւանդութիւն, որ քաղցկեղի նման մաշեցնում է մեր ազգային դիմագիծը եւ պահանջատիրական երթը:

Թրքամտութեան հիւանդութիւնը հայ երգի մեծագոյն թշնամին է: Սկզբնական շրջանում այն ներթափանցեց ճաշարանային երգի ոլորտ: Չնայած, որ երևոյթը մտահոգիչ է, սակայն չենք ուզում տազնապահար լինել, եւ թերեւս այստեղ բոլորս ենք յանցաւոր: Նրանք, իրենց պարային եւ սիրային տեսակներով, դուրս եկան ճաշարաններից՝ տարածելու համար ձայներիզների ու CD-ների ճամբով:

Մեծ բարիք համարող հայկական ռադիօկայաններն ու հեռուստատալիքները մեղսակից եղան՝ աղաւաղուած եւ թուրքական ախտով վարակուած երգերը տարածելու ոճրին:

Ինքնապաշտպանութեան համար շատերն են պատրուակ դարձնելու նորամուծութիւնը, միւսները՝ նոր երգիչների քաջալերանքը, բայց իրականութիւնն այն է, որ

մեր ժողովրդի մէջ տարածուած թրքամտութեան ախտը բուժելու փոխարէն, այդ ռադիօկայաններն ու հեռուստատալիքները քաղցկեղի նման այն տարածեցին: Մոլորւած ունկնդիրներին գոհացում տալու զուտ առևտրական մօտեցումը, փչացրեց թէ՛ ունկնդրին, թէ՛ հայ երգը:

Հայ երգի փրկութիւնն ու պահպանումը՝ առաքելութիւն է: Այլասերւած ունկնդիրների փափագին ընդառաջելու երեւոյթը առաքելութեանը չի առնչում:

Հաղորդակցութեան միջոցն առաջնորդում է, իսկ եթէ հետետղի վիճակի մէջ գտնուի, կորցնում է իր գոյութեան իրաւունքը: Մեր միութիւններն էլ, իրրեւ մեր հաւաքական կեանքի դրսևորումները, իրենց խօսքն ունեն հայ երգի հանդէպ կատարող «ոճրի» մասին: Բայց դժբախտաբար այլասերումն այնքան մեծ թափ է ստացել, որ մեր միութիւններն սկսել են կորցնել իրականութիւնն ու հիւանդութիւնը զանազանելու իրենց տեսողութիւնը:

Թրքաբարոյ երգերը «հիւանդութիւն» են: Նրանք նորամուծութիւններ չեն, որ մեր միութիւններն ստիպուած լինեն նրանց հեղինակներին քաջալերել. «Մա մեր տղան է», միւսը՝ «Մեր սրտի լարերի հետ է խաղում», «Ի՞նչ կը լինի, եթէ քաջալերենք», «Ի՞նչ հաճելի մթնոլորտ է ստեղծում», «Հին երգերից ճանճրացանք», եւ դեռ կարելի է թել անտեղի արտայայտութիւններ, որոնց զերի են դարձել մեր միութիւնները, եւ այդ պատճառով է, որ յաճախ միութեանական ձեռնարկներում, ճաշարանային շարքիներ հրամցնող «երգիչներ» են հրաւիրում: Յաճախ պատճառաբանում է, որ իրենք չեն կարող գնահատել եւ որոշել, թէ ո՞վ է թրքաբարոյ երգում եւ ո՞վ ոչ: Այս պատճառաբանութիւնն իր հերթին մտահոգիչ է, որովհետեւ ցոյց է տալիս հայ երգի նկատմամբ բացարձակ անտեղեակութիւնը:

Ծնց ասում դասական երգեր լսեք, թէւ լաւ կը լինի, եթէ երբեմն ունկնդրեք: Բայց չենք կարող ձեռնածալ մնալ թրքաբարոյ երգերի համաճարակային տարածման դէմ: Մի տեղ պէտք է կասեցնել այս խելագար հոսանքը:

Հեռուստատեսութիւնը, ձայնասփիւռը, մշակութային կամ բարեգործական միութիւնները՝ բոլորն անելիք ունեն այս ուղղութեամբ: Բոլորն էլ իրենց գոյութեան իմաստը կը ստանան՝ հայապահպանման համար աշխատելու իրենց յանձնառութեամբ: Հայ երգի պաշտպանութիւնը հայապահպանման գործի մէկ մասն է կազմում: Շեղումը համազօր է թուրքին ծառայելուն:

Թուրքական ազդեցութիւններով մեր ազգային դիմագիծի աղաւաղումը համազօր է՝ ջարդի, այս պարագայում՝ ինքնակործանման:

Միայն երգը չէ, որ պահպանում է մեր ազգային դիմագիծը, բայց երգը կապուած է հոգու հետ, իսկ ազգայնօրէն բիրտը հոգին լաւագոյն երաշխիքն է մեր գոյատևման: ■

«ԱԶԳԱԿ», 31 Յուլիս, 1998

(արեւմտահայերէնից վերածեց արեւելահայերէնի)



Է՞ն՞ Կ՞ն՞ Ն՞ն՞ Ա՞յ՞ն՞ Ա՞յ՞ն՞

Ժամն Ղազարեանի յիշատակին նիւրած՝ Ֆուտբոլային խաղեր «ԲաՖՖի» համալիրում. - Սոյն քաղաքի օգոստոսի 11-ին «ԲաՖՖի» համալիրում կազմակերպել էր Ֆուտբոլի մրցոյթ նիւրած՝ հանրայայտ եւ սիրած նահատակ Ֆուտբոլիստ Ժամն Ղազարեանի յիշատակին: Խաղերը նախաձեռնել էր «ԲաՖՖի» համալիրի մարզական բաժինը:

Թեհրանի քննի Պատգամաւորական Ժողովի ընտրութիւնների հետ կապած հանրահաւաք՝ Մաջիդի քաղամասում. - Սոյն քաղաքի օգոստոսի 15-ին Մաջիդի քաղամասի «ԲԱՄՍ» միութիւնում տեղի ունեցաւ հանրահաւաք: Քննարկեցին Պատգամաւորական Ժողովի ընտրութիւնների վերաբերեալ տարբեր հարցեր:

Հայ Ժողովրդական Շարժումը նշեց նահատակների յիշատակը. - Սոյն քաղաքի օգոստոսի 7-ին Թեհրանի հայկական գերեզմանոցում «ՀԺՇ» Իրանի մասնաճիւղը յարգանքի տուրք մատուցեց իր գոհած անդամների յիշատակին: Նահատակներին նիւրած կրօնական արարողութիւնը կատարեց՝ Տ. Վարազդատ քահանայ Քեշիշեանը, ապա ելոյթ ունեցաւ պրն. Մովսէս Քեշիշեանը:

Հայ աշակերտների ծնողները բողոքում են. - Քուշեշ միջնակարգ տղայոց դպրոցի աշակերտների ծնողները մտահոգուած լինելով իրենց երեխաների նախահամալսարանական ուսընթացի հետ կապուած հարցերով, դիմել են Կրթական Խորհրդին եւ դպրոցի տեսուչին, որ այդ ուսման դասընթացը նաեւ ներառի դպրոցի ծրագրում: Տեսուչը դիմել էր պատկան մարմիններին եւ ստացել արտօնութիւն: Աւարտած աշակերտների արձանագրելուց յետոյ է միայն, տեսուչն յայտնել, թէ Առաջնորդարանը իրատուք չի տալիս այս դասընթացը դպրոցում կիրառել: Որոշ ծնողներ բողոքել են Կրթական Խորհրդին, որը ի սկզբանէ բացատրել էր, թէ նիւթական դժուարութիւնների եւ աշակերտների սա-

կաւաքի լինելու պատճառով՝ համաձայն չէ դպրոցում սոյն դասընթացի կազմակերպման հետ: Մինչդեռ ըստ որոշ ծնողների՝ 38 աշակերտներ արդէն արձանագրուած են եղել, սակայն յետոյ նրանց առաջարկել են արձանագրել Սողոմոնեան դպրոցում: Իսկ ծնողները չեն ընդունել այն առաջարկը, քանի որ դպրոցը շրջանից դուրս ապրող աշակերտութեան համար շատ հեռու է: Դժգոհութիւնները շարունակուում են:

Է՞ն՞ Կ՞ն՞

Երկու միլիոն իրանացի՝ քմրանով են (Իրան օրաթերք 03.08.00). - Ըստ վերջին պաշտպանական տրւելների՝ Իրանում առկայ է 2 միլիոն քմրանով, որոնցից 50 տոկոսի տարիքը 18-ից ցածր է: Թմրամոլներից եւս 800.000 հոգի պատճառաբանել են, թէ իրենք դա անում են միայն զբաղմունք չունենալու հետեւանքով: Թմրամոլութեան հիմնական պատճառները հետեւեալն են՝ գործազրկութիւնը, սոցիալական ծանր վիճակը, անբովանդակ կեանքը, եւ, որ ամենից կարեւորն է, ընտանիքի սիրոյ եւ ընկերների բարեկամութեան պակասը:

Արտասահմանում բնակող իրանցիները 46 միլիոն քուման օգնութիւն են յատկացրել Արդաբիլ քաղաքում դպրոցների շինարարութեան համար (Համշահրի օրաթերք 9.08.00). - Արդաբիլ նահանգի դպրոցաշինութեան բարեգործական համալիրի նախագահը յայտնել է, որ այդ գումարից միայն 35 միլիոն քումանը ԱՄՆ-ում բնակող իրանացիներն են յատկացրել:

150 կուսակցութիւնների գրքանցման դիմումները ուսումնասիրել են (Համշահրի օրաթերք 14.08.00). - Ներքին գործերի նախարարութեան քաղաքական ընդհանուր բաժնի պետ պրն. Հաշեմասը յայտնել է, որ կուսակցութիւնների վերաբերող 10-րդ յօդուածի հիման վրայ՝ ուսումնասիրուած է 150 կուսակցութիւնների գրանցման խընդիրը: Պրն. Հաշեմասը յայտնել է, նաեւ որ 1368-1376-ի խորդալի 2-ը գրանցուած կուսակցութիւնների թիւը

հասնում է 35-ի, իսկ հիմա դրանց թիւը հասել է 120-ի:

Վերջերս զագի մեծ պաշարներ են յայտնաբերել Իրանի Ֆարս նահանգում (Համշահրի օրաթերք 14.09.00). - Իրանի Ֆարս նահանգի հիւսիսում «Հոմա» կենտրոնում, յայտնաբերել են քաղցր զագի մեծ պաշարներ, որոնց ծաւալը, մօտաւոր հաշուարկումներով, հասնում է 6 տրիլիոն եւ 700 միլիարդ խորհանարդ բնական զագի եւ 82 միլիոն տակազ զագային հեղուկի: Դրանց արժեքը կը գնահատուի մօտ 4 միլիարդ 700 միլիոն դոլար, որը կը գումարուի ազգային հարստութեանը:

Հէյար Ալիեը Թեհրան կը ժամանի (Իրան օրաթերք 06.08.00). - Ադրբեջանի արտաքին յարաբերութիւնների բաժնի պետ՝ Նովրուզ Մոհամմադովը յայտնել է, որ սոյն քաղաքի նոյեմբերին Ադրբեջանի նախագահ Հէյար Ալիեը կայցելի Թեհրան:

Ծ՞ն՞ Թ՞ն՞ Է՞ն՞ Կ՞ն՞

Քոչարեան - Ալիեւ յաջորդ հան-



դիպումը՝ սեպտեմբերին, Նիւ Եօրքում (Ազգ օրաթերք 19.08.00). - ԱՊՀ պետութիւնների ղեկավարների առաջին ոչ պաշտօնական հանդիպմանը մասնակցելու նպատակով՝ Գրիմուս գտնող նախագահ Ռոբերտ Քոչարեանն օգոստոսի 18-ին հանդիպում է ունեցել Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչմայի հետ: Երկու երկրների ղեկավարների գրոյցն առաւելապէս տնտեսական բնոյթ է կրել: Քննարկել են ինչպէս հայ-ուկրաինական երկկողմ, այնպէս էլ ԱՊՀ շրջանակներում տնտեսա-

կան համագործակցության ակտի-
ւացմանն առնչող հարցեր: Այդ
առումով կարելու է Հայաստանի
վարչապետի այս տարայ աշնանը
նախատեսող այցը Ուկրաինա, որը
հնարավորություն կը տայ յստակեց-
նել համագործակցության առանձին
ուղղությունները: Հայաստանի եւ Ուկ-
րաինայի նախագահներն առանձ-
նապատուկ նշանակություն են տւել
ԱՊՀ շրջանակներում տնտեսական
ինտեգրացիայի խորացմանը:

Օգոստոսի 18-ին օրայ երկրորդ
կէսին սկսւել է նախագահ Ռոբերտ
Քոչարեանի հանդիպումը Ադրբեյջա-
նի նախագահ Հէյդառ Ալիեւի հետ:

Հանդիպումից յետոյ պատասխա-
նելով լրագրողների հարցերին, նը-
րանք նշել են, որ պայմանաւորուել են
շարունակել սկսած երկխօսութիւնը,
եւ երկու նախագահների յաջորդ
հանդիպումը տեղի կունենայ սեպ-
տեմբեր ամսին Նիւ Եօքքում՝ ՄԱԿ-ի
Հնարամտակի գազաքաժողովի
շրջանակներում: Կողմերը ես մէկ
անգամ շեշտել են փոխզիջումների
վրայ հիմնուած հակամարտութեան
բոլոր կողմերի համար ընդունելի լու-
ծումներ գտնելու անհրաժեշտու-
թիւնը:

Պատասխանելով ադրբեյջանցի
լրագրողի հարցին, թէ ինչո՞ւ է
Հայաստանը յատկապէս կարելու-
րում տնտեսական համագործակցու-
թիւնը, Ռոբերտ Քոչարեանն ասել էր,
որ այդ դէպքում հակամարտութեան
կարգաւորման բանաձեւը շատ աւելի
հեշտ կը լինի: Նրա խօսքերով, եթէ
երկրները կապուած լինեն ընդհանուր
տնտեսական շահերով, դա կօզնի
խուսափել աւելորդ կասկածամտու-
թիւնից եւ բարենպաստ մթնոլորտ կը
ստեղծի հակամարտութեան կար-
գաւորման համար:

**Կաշառակերներին ձեռքակալե-
ցին.**-(Հայաստանի Հանրապե-
տութիւն օրաթերթ 13.06.00).- ՀՀ ԱԱ
նախարարութեան ձեռնարկած օպե-
րատիւ հետախուզական միջոցա-
ռումների արդիւնքում յունիսի 9-ին
կաշառք վերցնելու պահին, ձեռքա-
կալւել են Երևանի «Կենտրոն» հա-
մայնքի գլխատըր ճարտարապետ՝
Արամ Ներսիսեանը եւ Երևանի քա-
ղաքապետարանի ճարտարապետա-
կան վարչութեան առաջատար ճար-
տարապետ՝ Կարէն Նազարեանը:

**Ռազմական ուղրտում դրւել է
հայ-ամերիկեան պաշտօնա-
կան յարաբերութիւնների հիմքը** (Հա-



**յաստանի Հանրապետութիւն օրա-
թերթ 27.07.00).**- «Չուրթնոց» օրա-
նաւակայանում վայրէջքից անմի-
ջապէս յետոյ ՀՀ պաշտպանութեան
նախարար Սերժ Մարգսեանը լրա-
գրողներին տեղեկացրեց ԱՄՆ
պաշտպանութեան քարտուղար Ուլի-
եան Քոնէնի հրաւերով այդ երկիր
կատարած երկօրեայ այցի արդիւնք-
ներին: Նա նշեց, որ սա Հայաստանի
պաշտպանութեան նախարարի ա-
ռաջին պաշտօնական այցն էր ԱՄՆ,
ինչը նշանակում է, որ երկու երկր-
ների միջեւ դրւել է այս ուղրտում
պաշտօնական յարաբերութիւնների
հիմքը:

«ՀՀ»-ի հարցին, թէ՛ արդե՞օք Վը-
րաստանը աւելի սերտ կապեր չի
հաստատել Միացեալ Նահանգների
հետ, Սերժ Մարգսեանը պատաս-
խանեց. «Այո՛, այստեղ խնդիրն այն
չէ, թէ Ռուսաստանի հետ մեր կա-
պերը շատ են «խորացել», այլ որ,
ինչպէս ԱՄՆ պաշտօնական այրերն
են ասում, հայ-ամերիկեան ռազմա-
կան յարաբերութիւնների զարգաց-
մանը խանգարում է՝ յայտնի 907
բանաձեւը: Վերջինս թէի իրաւաբա-
նօրէն ուղղուած է Ադրբեյջանի դէմ,
ԱՄՆ ռազմական գերատեսչութեան
դեկավարներն այն տեսակէտին են,
որ, քաղաքական տեսանկիւնից, այդ
փաստաթուղթը խոչընդոտում է հայ-
ամերիկեան ռազմական յարաբե-
րութիւնները: Իմիջիայրոց, ես պաշտ-
պանութեան նախարարին շնորհա-
կալութիւն յայտնեցի այն բանի հա-
մար, որ 1990 թ. նա, որպէս սենա-
տոր, հայկական ցեղասպանութիւնը
ճանաչելու բանաձեւի համահեղի-

նակն է եղել, իսկ 1993 թ. նաեւ նրա
ջանքերով է ընդունւել 907 բանաձե-
ւը: Ես նրան հարցրի՛ երբ քւտարկում
էր այդ բանաձեւի օգտին, արդե՞օք
գիտակցում էր, որ դա նաեւ Հայաս-
տանի դէմ կուղղուի: Նա, իհարկէ,
չպատասխանեց...»:

Նախարարը տեղեկացրեց, որ
Հայաստանի պաշտպանութեան նա-
խարարութեանը տրամադրուած 300
հազար դոլարը տեխնիկական օգնու-
թիւն է եւ կը յատկացուի ՀՀ սահմա-
նային հսկողութիւնն արդիականաց-
նելուն: Պետդեսպարտամենտում քըն-
նարկւել է նաեւ արցախեան հակա-
մարտութեան խնդիրը, սակայն որեւէ
առաջարկ, նոր տեսակէտ չի ներկա-
յացւել:

Պրն. Մարգսեանը յայտնեց նաեւ,
որ 1-1.5 ամսից Հայաստան կը գան
ԱՄՆ բարձրատիճան ներկայացու-
ցիչներ, իսկ աշնանը, ամենայն հա-
ւակնութեամբ, կը ժամանի ԱՄՆ
պաշտպանութեան քարտուղարի
փոխտեղակալ Ջ. Սթարը:

**Հայ կանանց երրորդ միջազգային
համագումարը՝ Երեւանում** (Հա-
յաստանի Հանրապետութիւն օրա-
թերթ 09.06.00).- Հայ կանանց միջազ-



գային միութեան նախագահ՝ Հրա-
նուշ Յակոբեանը տեղեկացրել է, որ
հոկտեմբերի 8-11-ը Երեւանում կը
կայանայ հայ կանանց երրորդ մի-
ջազգային համագումարը: Այս միու-
թիւնը հիմնւել են Բարբարա Մեր-
քերեանը եւ Իւա Մեծօրեանը՝ 1991 թ.
Բոստոնում, որտեղ էլ 1992-ին կայա-
ցու հայ կանանց առաջին համա-
գումարը՝ մօտ 300 կանանց մասնակ-
ցութեամբ: Երկրորդը կայացաւ 1997-
ին՝ Փարիզում, որին Հայաստանից
մասնակցեցին 30 կին: Ի դէպ, ար-
տասահմանեան հրաւիրեալները
մուտքի համար կը վճարեն 100 ԱՄՆ
դոլար, իսկ հայաստանեան հրաւիր-

եալները համագումարին կը մասնակցեն անվճար:

Համագումարի նպատակն է՝ քրն-նել հայ կանանց ձեռքբերումներն ու յաջողութիւնները անցնող դարաշրջանում, ներկայացնել նրանց առջև ծառայած դժարութիւնները, չլուծուած խնդիրները՝ փնտրելով լուծման ուղիներ, առաջադրել նոր նպատակներ: Հոկտեմբերի 7-ին նախատեսուած է քայլարշաւ անցկացնել, 8-ին կը կայանայ համագումարի բացումը, 9-ին, 10-ին, 11-ին՝ նստաշրջաններ կառավարութեան նիստերի դահլիճում:

Տօն՝ Կարողիկէ Ս. Էջմիածնի (Հայաստանի Հանրապետութիւն օրաթերթ 24.06.00). - Հայաստանեաց Առաքելական Սուրբ եկեղեցին յունիսի 25-ին նշում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հիմնադրման տօնը: Խորհրդաւոր ու զարմանալի է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմութիւնը: Ադամորդու միտքն ու հոգին չեն կարող չհիանալ այն կեանքով, որով մօտ 1700 տարի ապրել է հայոց Աստուածակերտ Ս. Աթոռը: Եւ թող իւրաքանչիւրն իր ներքին տաճարում լուսայ մի խորան կերտի, որպէսզի Ս. Էջմիածնից ճառագող լոյսի կենսապարզել շողն այնտեղ թափանցի, և մեր հոգիներում ու սրտերում անասկարկ ԷՏՄԻԱԾՆԱՄԻՐՈՒԹԻՒՆ ու ԱՂՕԹԱՍԻՐՈՒԹԻՒՆ բորբոքի:

*Արթուր դպիր Կարապետեան
Գերդեան հոգեւոր ծենարանի սան*

Տարբեր ոլորտներում սփիւռքի հետ կապերի հաստատմանը մենք առնալով մէկ տարով ետ ենք ընկել (Աշխարհ շաբաթաթերթ 29.07.00). - ՀՀ արտգործնախարար Վ.Օսկանեան յուլիսի 11-ին նկատել է, - Քանի որ պակասում էր ներքաղաքական կայունութիւնը, առկայ էր սփիւռքի անտարբերութիւնը, նրանց յուսախաբութիւնը, որը թոյլ չէր տալիս որևէ գործունէութիւն ծաւալել: Սփիւռքի հետ հանդիպումներից Հայաստանի պատկերակութիւնն այն եզրահանգմանն է եկել, որ սփիւռքում այսօր Հայաստանի նկատմամբ վստահութիւնն ու հուսալք վերականգնում են, - ընդգծեց Օսկանեանը:

Հայոց պատմութեան ձեռնարկ (Հայաստանի Հանրապետութիւն

օրաթերթ 24.06.00). - Հայ պատմաբանների կողմից ուժեղով լոյս է տեսել հայոց պատմութեան ձեռնարկ՝ արևմտահայերէնով պատմագիտութեան դոկտոր



Է. Գանիկեանի խմբագրութեամբ: Այն նախատեսուած է սփիւռքահայ ուսումնական հաստատութիւնների համար: Ձեռնարկը բացում է «Մեր հայրենիքը Հայաստանն է» բաժնով, որում նշուած է, այժմեան ՀՀ-ն և Լեռնային Դարաբարդի Հանրապետութիւնը միասին կազմում են Հայկական լեռնաշխարհի հիւսիսարեւելեան մասը՝ Մեծ Հայքի և Փոքր Հայքի տասներեք անգամ կրճատուած տարածքը:

Պատերազմ ստերային տնտեսութեան և տանիքների դէմ (Հայաստանի Հանրապետութիւն օրաթերթ 21.07.00). - Այս կապակցութեամբ ՀՀ պետական եկամտների նախարար Գագիկ Պօղոսեանը տեղ է հետեւեալ բացատրութիւնները. - «Այս տարի, համաձայն նախանշուած ժամանակաշրջանում առկայ ցուցանիշների, հարկային եկամտները մօտ 2 մլրդ. դրամով աւել են զանձնել: Սա, ինչ խօսք, իրաւունք է տալիս մտածել, որ ընդարձակել են հարկման շրջանակները»:

Այս ընթացքում յայտնաբերել են եկամտները քողարկելու խոշորամասշտաբ դէպքեր: Օրինակ, յունարից-յունիս ընկած ժամանակահատուածում ՀՀ պետական եկամտների նախարարութեան օպերատիւ հետախուզութեան և կենտրոնացուած ստուգումների վարչութիւնների ստուգումներով ընդհանուր առմամբ յայտնաբերել են 6 մլրդ 234 մլն 896.9 հազար դրամ թաքցուած գումարներ: Ի թիւս շատ խոշոր ընկերութիւնների, ցուցակում իրենց պատկառելի տեղն են գրաւում խաղատներն ու լոտօները: Սակայն, այնուամենայնիւ, շատ հարկատուներ ստուգումների արդիւնքում զբրանցուած ակտերին համաձայն չեն լինում և դիմում են դատարան: «Այս

հանգամանքը մեծ վնաս է պատճառում մեր պետութեանը՝ իմանալով, թէ դատարանում ինչ է կատարում», - նկատում է Գ. Պօղոսեանը: Ըստ նրա՝ եթէ անհնազանդ հարկատուները յոյսը կտրեն դատարաններից, հարկման մակարդակը կը մեծանայ շուրջ հինգ անգամ:

ՀՀ մշակութային օրեր Թեհրանում (Հայաստանի Հանրապետութիւն օրաթերթ 22.07.00). - ՀՀ մշակոյթի, երիտասարդութեան հարցերի և սպորտի նախարար Ռոյանդ Շառոյեանը տեղեկացրել է, որ աշնանը Թեհրանում տեղի կունենայ ՀՀ մշակոյթի օրերի ծրագիր: Նա աւելացրել է, որ Իրանի մշակոյթի նախարար Մոհաջերանիի առաջար-



կութեամբ է սա ձեռնարկել: Աւելացւեց նաև, որ կը կայանայ Մարգիս Փարաջանեանի ցուցահանդէսի և կինօնկարի դիտումը՝ յետաձգելով այն յաջորդ տարւայ:

ՅԷԷ² 1/4 1/2 ՍԷՍ

Աշխարհի տնտեսութիւնը 2000 թրւականին 4.75 տոկոսով աճել է (Համշահրի օրաթերթ 09.08.00). - Դրամի միջազգային սնդուկի ընդհանուր նախագահ պրն. Հերբետ Քոնլերը շեշտել է, որ 2000 թականին սպասուած է համաշխարհային տրնտեսութեան 4.75 տոկոսով աճ:

Ներդրեան նասահանգիստը ջրով ծածկելու է (Իրան օրաթերթ 03.08.00). - Երկրաբան դոկտ. Շի Փենլանդը այս կապակցութեամբ յայտնել է, որ երկրագնդի աստիճանաբար տաքացման, հիւսիսի սառոյցների հալման և գետերի ու ծովերի ջրի մակերեսի բարձրացման

հետեւանքով շատ նաւահանգիստներ, յատկապէս «Նեորլան» նաւահանգիստը, ջրի տակ են անցնելու:

Որդի սնունդ (Իրան օրաթերք 08.08.00). - Գիտահետազոտական աշխատանքները ցոյց են տւել, որ որդերը պարունակում են մարդու համար օգտաւէտ սպիտակուց: Այժմ ուսումնասիրում է, թէ ինչպէ՞ս հնարար կը լինի յատուկ կերակրատեսակներ պատրաստել որդերից:

Լիբանանում հայերէնը երկրորդ լեզու (Ազգ օրաթերք 18.08.00). - Լիբանանի կրթութեան նախարար Իսէֆ Բայրունը վերջերս Բէյրութի «Իւնեսկօ» պալատում տուած մամլոյ ասուլիսում արդէն պաշտօնապէս յայտարարել է, որ հայերէնը, իտալերէնը եւ իսպաներէնը երկրի տարբեր դպրոցներում դասաւանդուելու են որպէս երկրորդ լեզու՝ արաբերէնից յետոյ: Մամուլի ասուլիսին ներկայ են գտնուել Լիբանանի խորհրդարանի հայ անդամներ Եղնիկ Ջերեջեանը, Աբրահամ Դեղէյեանը, Սեպուհ Յովնանը, ինչպէս նաեւ Լիբանանում Հայաստանի դեսպան Արման Նաւասարդեանը, որն այդ առիթով շնորհատրել է լիբանանեան կողմին «հայերի համար այս շատ կարեւոր որոշման համար»: Մեր կողմից յիշեցնենք, որ Լիբանանում բացի պաշտօնական արաբերէն լեզուից, դպրոցներում շատ հիմնարար դասաւանդուում են նաեւ Ֆրանսերէն եւ անգլերէն լեզուները:

Երլմագը Պոլսի հայոց պատրիարքին խոստացել է լուծել հայ համայնքի խնդիրները (Ազգ օրաթերք 19.08.00). - ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ: «Ամերիկայի ձայնի» հաղորդման համաձայն, Պոլսի հայոց պատրիարք Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեանը մէկժամեայ հանդիպում է ունեցել Թուրքիայի փոխվարչապետ եւ Երոխտրիքի հետ յարաբերութիւնների պատասխանատու Մեսուք Երլմագի հետ՝ վերջինիս անըստպասելի նախաձեռնութեամբ:

Պոլսոյ պատրիարքը Երլմագին ներկայացրել է Թուրքիայի հայ համայնքին յուզող հրատապ խնդիրները եւ նշել, որ հայ համայնքի դիմագրաւած խոչընդոտներն առաջին հերթին ծագում են Թուրքիայի հա-

յազգի քաղաքացիների համայնքային ու կենտրոնական հաստատութիւնների թուրք ու մահմեդական հիմնարկների հետ հաւասար իրաւունքներ չունենալու պատճառով: Ըստ պատրիարքի՝ համայնքի կեանքում բազում հարցեր կը լուծուին, եթէ պետութիւնն իր հայազգի քաղաքացիներին որպէս լիիրաւ քաղաքացիներ ընդունելով, անհապաղ վերացներ մի քանի սկզբունքային արհեստական խոչընդոտներ:

Թուրքիայի փոխվարչապետն իր հերթին հայոց պատրիարքին խոստացել է հնարարութեամբ քան անել վերոյիշեալ հարցերի լուծման համար, քանի որ «այդ են պահանջում Թուրքիայի շահերը...»:

Հայ ազգի աշխարհահռչակ նկարիչ՝ Գառզուն մահացաւ. - Սոյն քուկանի օգոստոս 12-ին, Փերիջէօ քաղաքում, իր մահկանացուն կնքեց հայ ժողովրդի հանճարեղ նկարիչ Գառզուն (Գառնիկ Չուլումեան):



Գառնիկ Չուլումեանը ծնւել է Հաւլպատ՝ 1907 քուկանին՝ Տիգրանակերտից գաղթած ծնողներից: Նախնական կրթութիւնը ստացել է Եգիպտոսի՝ «Գալստեան» վարժարանում: Ծարտարապետութեան գրծով մասնագիտացել է Փարիզում: Նախ արեստի ասպարէզում հանդէս եկաւ որպէս գծանկարիչ եւ մեծ յաջողութեան հասաւ, յետոյ նա ընդլայնեց իր ստեղծագործական սահմանները՝ նկարելով տարբեր ոճերով: Մեծ արեստագէտի կտաւները առաջին անգամ ցուցադրուել են 1939 քուկանին:

Գ. Չուլումեանը Ֆրանսիայի Ակադեմիայի անդամ էր եւ նաեւ Հայաստանի Արեստից Ակադեմիայի պատուոյ անդամ:

Մեծ է նրա կորուստը եւ ցաւալի ոչ միայն հայ ժողովրդի, այլեւ ողջ աշխարհի համար, քանզի նրա ըստեղծագործութիւնները զարդարում են համաշխարհային արեստի բազում օջախներ: ■

Անգլիացի մասնագէտները ծանօթանում են ԼՂՀ հիմնախնդիրներին (Ազգ օրաթերք 10.08.00). - Ստեփանակերտ, ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ: ԼՂՀ վարչապետ Անուշաւան Դանիէլեանն ընդունել է Լոնդոնի Քինգս քոլէջի դասախօսներ, ռազմագիտական ամբիոնի պրոֆեսոր Դոլ Լինչին եւ Էրիկ Բողելէյրին, որոնք տարածաշրջան են ժամանել յատուկ առաքելութեամբ: Ըստ ԼՂՀ կառավարութեան մամլոյ ծառայութեան հաղորդագրութեան, հիւրերին հետաքրքրում են ԽՍՀՄ-ի փլուզումից յետոյ անկայտութեան ուղին բռնած, սակայն առ այսօր չճանաչուած երկրների հիմնախնդիրները: Եւ այդ համատեքստում նրանք ծանօթացել են Լեռնային Ղարաբաղի ներքաղաքական, սոցիալտնտեսական, մշակութային կեանքին, կատարել սոցիոլոգիական հետազոտութիւններ նախատեսում են առանձին գրքով հանրութեանը ներկայացնել իրենց նկատառումները:

Ողջունելով Դ. Լինչի եւ Է. Բողելէյրի առաքելութիւնը, ԼՂՀ վարչապետը համոզմունք է յայտնել, որ հրատարակող գիրքը լայն պահանջարկ կը գտնի ընթերցողների շրջանում եւ հնարարութիւն կընձեռնի ծանօթացնելու դարաբաղեան հիմնախնդիրին, երկրամասի տնտեսական, ազգային, պատմամշակութային առանձնայատկութիւններին, Արցախի ժողովրդի օրինական պահանջներին: ■

ՏԻՐՈՒՆԻ

Լոյս երկշաբաթերիքը իր վշտակցութիւնն է յայտնում ներքոյիշեալ նորոգ հանգուցեալների անմիջապէս հարազատներին և բոլոր սգակիրներին:

- < Ծատուր Մատթէոսեան
- < Վարդուշ Մելքոնեանց (Միքայէլեան)
- < Միշա (Ռոբերտ) Գասպարեան
- < Հրայր Օհանեան
- < Ռուբիկ Դաւթեան
- < Վրէժ Ջատիկեան
- < Թաղէս Գոլոյեան

Ï² ÛàÛ², ðàòÂÆòÛ² Â °Ðð² ÛÆ Ð² Ûàò Â °ØÆ

30ԴԻԱԾ 61

Ծխական Տուրքը որպես Թեմական հասոյթ, սոյն Կանոնադրութեան Յօդած 126-ի ա. կետի համաձայն, մուծում է Ազգային Առաջնորդարանի գանձարկը, որի գործառնութիւնը կատարում է Թեմական Խորհրդի միջոցով, Թեմի Պատգամաւորական Ժողովի կողմից հաստատուած նախահաշի սահմաններում:

10. ԴԱՏԱԿԱՆ ՍԱՐՄԻՆ

30ԴԻԱԾ 62

ա- Թեմի չհայտանեաց Առաքելական Սուրբ Եկեղեցու զարակների միջեւ ծագած ընտանեկան-ամուսնական եւ կամ այլ վեճերն ու անձնական իրաւունքների առնչող հարցերը քննելու եւ համապատասխան տնօրինութիւն կատարելու համար, Թեմական խորհուրդը սոյն կանոնադրութեան յօդած 42-ի տրամադրութեան համաձայն կեանքի է կոչում յատուկ Դատական Մարմին, բաղկացած 5-7 եկեղեցական եւ աշխարհական անդամներից, որոնք պիտի լինեն ամուսնացած եւ որոնց տարիքը պիտի լինի 40-ից վեր: Անդամներից առնուազն մէկը պիտի լինի մասնագէտ օրէնագէտ, առանց նկատի ունենալով տարիքը եւ ամուսնական վիճակը:

բ- Դատական Մարմնի նախագահն ի պաշտօնէ Առաջնորդն է, որը իր պարտականութիւնը կատարում է անձամբ կամ իր կողմից նշանակուած փոխանորդի միջոցով:

գ- Դատական Մարմնի ատենապետը ընտրուած է կազմի աշխարհական եւ գերադասելիօրէն օրէնագէտ անդամներից:

30ԴԻԱԾ 63

Դատական Մարմնի պարտականութիւններն ու իրաւասութիւններն են՝

ա- Քննել Թեմի չհայտանեաց Թեմի չհայտանեաց Առաքելական Սուրբ Եկեղեցու զարակների միջեւ ծագած

ընտանեկան-ամուսնական վեճերը եւ երկրի պետական օրէնքների թոյլատուութեանց սահմաններում վճռահատել ու պատշաճ տնօրինութիւն անել:

բ- Կողմերի համաձայնութեան պարագային, իրաւարարի պաշտօն կատարել Թեմի չհայտանեաց Առաքելական Սուրբ Եկեղեցու զարակների միջեւ ծագած ու յատկապէս ընտանեկան-ամուսնական բնոյթ ունեցող վեճերի առընչութեամբ եւ երկրի պետական օրէնքների սահմաններում իրաւարարի վճիռ կայացնել:

գ- Քննել եւ վճռահատել Հայաստանեաց Առաքելական Սուրբ Եկեղեցու զարակների ժառանգական, խնամակալական, կտակի եւ որդեգրութեան հետ կապուած խնդիրները:

դ- Քննել պետական դատական ատենաների կողմից տրուած ու Հայաստանեաց Առաքելական Սուրբ Եկեղեցու զարակների ընտանեկան-ամուսնական եւ այլ անձնական խնդիրներին առնչող հարցերը կամ նոյն նպատակով պետական դատական ատենաների կողմից Ազգային Առաջնորդարան յղուած թրթածրարները եւ ըստ պատշաճի պատասխանել պետական դատական ատենաներին:

30ԴԻԱԾ 64

Ընտանեկան-ամուսնական վեճերի առնչութեամբ վերջնական վճռահատում կատարելու պարագային, Դատական Մարմնի վճռահատումները, Առաջնորդի միջոցով, յղում են Վեհափառ Հայրապետին, առ ի վարացում, որից յետոյ գործադրութեան են դրում:

30ԴԻԱԾ 65

Դատական Մարմինը իրեն ներկայացուած հարցերը քննում է Հայաստանեաց Առաքելական Սուրբ Եկեղեցու կանոնների եւ աներկրայելի աւանդութիւնների եւ սովորոյթների համաձայն, միշտ ի մտի

ունենալով նաեւ պետական օրէնքները:

30ԴԻԱԾ 66

ա- Դատական Մարմնի իրաւասութիւնների սահմաններում գտնող հարցերը, պատկան անձանց կողմից ներկայացուած հարցը յղում է Դատական Մարմին առ ի քննութիւն:

բ- Թեմակալ Առաջնորդը Դատական Մարմնի ատենապետի հետ համախորհուրդ կարող է անել առժամեայ կարգադրութիւններ, մինչեւ դատական ատենանի վերջնական վճռահատումը:

30ԴԻԱԾ 67

ա- Դատական Մարմնի կողմից կատարուած հարցաքննութիւնները եւ կազմուած արձանագրութիւնները, ըստ որոնցում են կազմի ներկայ անդամների կողմից, հարցաքննող կողմերի հետ միասին:

բ- Դատական Մարմինը իր որոշումները, ըստ պարագային, գրաւոր կերպով յայտնում է դատաւարոյց կողմերին եւ կամ պատկան պետական դատական ատենաներին:

30ԴԻԱԾ 68

Դատական Մարմինը, բացի ներկայ Կանոնադրութեամբ իր համար սահմանուած իրաւունքներից եւ պարտականութիւններից, համարում է նաեւ իրաւաբանական խորհրդատու մարմին Թեմական Խորհրդի համար, եւ ի պահանջել հարկին, քննում, ուսումնասիրում եւ իրաւաբանական խորհուրդ ու կարծիք է յայտնում բոլոր այն խնդիրների նկատմամբ, որ Թեմական Խորհուրդը յղում է իրեն:

30ԴԻԱԾ 69

Դատական Մարմինը, ամէն տարեկան, իր միամտայ գործունէութեան զեկոյցը ներկայացնում է Թեմական Խորհրդին: ■

Ճար. 6

Հարցազրույց՝

տիկ. Ժանետ Լազարեանի

հետ

Հ.- Տիկ. Լազարեան թեպետ Դուք ճանաչած դեմք էք համայն-քում, այնուամենայնիս կը խնդրենք ներկայանալ:

Պ.- Գաղթական ընտանիքի գառակ եմ, մայրս Ագուլիսից է գաղթել, (հայրս յայտնի Լազարեան ընտանիքի որդին էր եւ իր քրոջ հետ շատ երիտասարդ տարիքից Երեւանից եկել եւ հաստատուել էր Թաւրիզ): Սովորել եմ Թեհրանի «Նուրբախշ» դպրոցում, որտեղ էլ ծանօթացել եմ, գրականութեան հետ, եւ Անգլիայում՝ մասնագիտանալով արեւստի պատմութեան բնագաւառում: Իմ առաջին յօդածները տպագրուել են «Ֆերդոսի» շաբաթաթերթում: Թղթակցել եմ «Էթթելաթ» թերթում: Այստեղ իմ յօդածները տպագրուել են պարսկերէն լեզուով, միեւնոյն ժամանակ եղել եմ անգլերէն լեզուով հրատարակող «Թեհրան Ժուռնալ» թերթի գրական եւ գեղարւեստական բաժնի վարիչը: Այս թերթում ես ունէի նաեւ մի յատուկ սիւնեակ, ուր տպագրուում էին ցուցահանդէսներին, թատրոններին, Ֆիլմերին եւ տպագրած գրքերին առնչող իմ հարողագրութիւնները: Յեղափոխութիւնից յետոյ 10 տարի «րել» եմ: Բայց այդ տարիների ընթացքում, ինչքանով որ կարողացել եմ, օգնել եմ իմ նախկին գործընկերներին:



Յեղափոխութիւնից յետոյ համագործակցել եմ «Իւնայթեդպրես» գործակալութեան հետ: Աշխատակցել եմ նաեւ «Դոնեայէ Սոխան» թերթում: Հիմա իհարկէ տարիքս բարձրացել է, եւ դժարանում եմ՝ ամէն օր թերթի խմբագրատուն գնալ, շաբաթայ ընթացքում մէկ օր եմ ընդամենը խմբագրատուն յաճախում, մանաւանդ, որ այսօր գիտութեան զարգացման պատճառով՝ մենք ունենք յարմարաւետ միջոցներ, օրինակ՝ «Ֆաքս», համակարգիչը եւ այլն:

Իմ գրական աշխատանքին զուգահեռ մի քանի հասարակական-ազգային գործունէութիւն էլ ծաւալել եմ: Երբ աշխարհահռչակ հայ կինօնեժիտը «Մերգէլ Փարազանով»-ը բանտում էր գտնուում, ես՝ ի նպաստ նրա ազատութեան, շատ միջոցների դիմեցի, եղայ տարբեր երկրներում եւ ամենուրեք պահանջեցի նրա ազատութիւնը: Այդ հարցով եղել եմ Հնդկաստանում, Ֆրանսիայում, Ռուսաստանում: Մասնակցել եմ Գերմանիայի «Բեռլին» Ֆիլմի փառատունին: Այստեղ նոյն պահանջն եմ ներկայացրել: Մոսկւայում մտել եմ «Մոսֆիլմ» եւ խնդրել, որ յանուն նրա արեւստում թողած ժառանգութեան՝ որոշ միջոցներ կիրառեն նրան ազատելու համար: Այդ նոյն նպատակով յօդածներ եմ գրել «Ալիք» օրաթերթում:

Հ.- Քանի՞ լեզուներ գիտէք եւ ի՞նչ լեզուներով էք գրում:

Պ.- Դժբախտաբար իմ հայերէնը համեմատաբար թոյլ է, 2 տարի եմ միայն հայերէն սովորել: 2 լեզուներով եմ գրում՝ պարսկերէն եւ անգլերէն:

Հ.- Դուք արեւստազէտ - արեւստասէր մտաւորական էք, արդեօք բեմային անցեալ ունեցե՞լ էք:

Պ.- Եղել եմ եկեղեցական երգչախմբի անդամ, միշտ սիրել եմ երգն ու երաժշտութիւնը, մանաւանդ հին դասական եւ եկեղեցական երաժշտութիւնը:

Հ.- Ինչքան գիտենք, Դուք «Քաղաքակրթութեան երկխօսութեան» կենտրոնի վարիչ կազմի անդամ էք, նոյնպէս գիտենք, որ այդ հարցով դուք պատասխանատու յանձնառութիւն էք ունեցել: Ի՞նչ կատէիք այդ մասին:

Պ.- Ի.Ի Առաջնորդութեան նախարարութեան հրաւերով անցեալ տարի ես ներկայ եղայ Ամանորի եւ Ս. Ծննդին նիիրած մի տօնահանդէսի: Այնտեղ հրապարակուեց ինչ հայերը եւ ասորիները: Ես առաջարկեցի, որ մնան ձեռնարկների փոխարէն մի գիրք հրատարակեն եւ այդ գրքի էջերում գրեն հայ մտաւորականների, գործիչների եւ նրանց գործունէութեան մասին: Կարծես, թէ հէնց իմ առաջարկին էին սպասում, ամմիջապէս խնդրեցին ինձ յանձն առնել այդ գործը: Արդէն պատասխանատուութիւնն յանձն առնելու ժամանակ զգում ես, թէ որքան դա պատասխանատու եւ մեծ լեզական տեսլներ պահանջող գործ է: Սակայն, չնայած դրան, հաճոյքով ընդունեցի այդ ծանր պարտականութիւնը, քանզի իմ սրտին շատ մօտ էր: Մասնակցութեամբ տիկ. Էռիքա Պօղոսեանի՝ իմ վաղեմի դասընկերուհու, որ արդէն աշխատում էր այդ ուղղութեամբ, եւ որը ընդառաջելով իմ դիմումին սիրով համագործակցեց եւ մի քանի բարի անձնատուութիւնների համագործակցութեան շնորհիւ՝ մի յանձնախումբ կազմեցինք: Մօտ 8 ամիս՝ շաբաթական մէկ օր եւ օրեկան մի քանի ժամ աշխատելուց յետոյ դիմեցինք բոլոր միութիւններին եւ ազգային մարմիններին, որոնցից միայն Թաւրիզի թեմի Առաջնորդն էր, որ պաշտօնապէս ցանկութիւն յայտարարեց՝ համագործակցելու նպատակով: Վերջապէս բոլոր միութիւնների մասնակցութեամբ տեղի ունեցաւ համագումար: Միայն այդ ժամանակ էր, որ միութիւնները գործի լրջութիւնը զգացին:

Ինձ այս գործում օգնում էր «Քաղաքակրթութեան երկխօսութիւն» կենտրոնի աշխատակից՝ օր. Այիդա Ազարեանը, որի գործը ես բարձր եմ գնահատում: Ես միշտ էլ պատրաստ եմ սեղմելու այն ձեռքը, որը կը մեկնի՝ նպաստելու այս ազգօգուտ գործին: Ի միջիայլոց ասեմ, որ ես ունեմ 3 աշխատութիւններ եւս, որոնք տարբեր փուլերի մէջ են: Բոլորի վրայ էլ բաւական աշխատանք եմ տարել, սակայն Ֆինանսների պակասի եւ այլ պատճառների հետեւանքով, դրանք դեռ իրենց աւարտին չեն հասցրել:

Իրանահայերի մասին հրատարակելիք այս գրքի համար ես բազում տեղեր եմ դիմել՝ ուր որ գիտէի, ում որ ճանաչում էի: Ոմանք ընդառաջեցին, ոմանք էլ՝ հակառակը: Ես կուզեմայի այդ բոլորից յիշել պրն. Էմիլ Յակոբեանին՝ Թաւրիզից եւ պրն. Լեւոն Մինասեանին՝ Նոր Ջուղայից, որոնք սիրալոյսով կամքով առաջիններից եղան, որ արձագանգեցին իմ խնդրանքին: Մենք մեր ազգի հանդէպ պարտականութիւններ ունենք, որոնք պէտք է կատարենք: Դիշտ է եւ Իրանում եմ ծնել, բայց իմ

Հասարակական

Ծնողներս եկել են Հայաստանից եւ վերջապէս Հայաստանը մեր պապերի հայրենիքն է, մեր գոյատեւման երաշխիքը եւ մեր վերջին հանգրուանը: Եթէ մի օր ոմանք այն պատրասկով, թէ Հայաստանը համարում էր Սովետական, չէին մօտենում նրան, այսօր ցաւօք հէնց նման մարդկանցից շատերը հէնց նոյն վերաբերմունքն են դրսեւորում: Իսկ թէ այսօր նրանք ի՞նչ պատճառաբանութիւններ են որոնում իրենց գործը արդարացնելու համար՝ չգիտեմ:

Հ.- Արդեօք լաւ չէ՞ր լինի, որ Դուք Ձեր աշխատանքը լիակատար արդիւնքի հասցնելու համար, կոչ անէիք համայնքի բոլոր միութիւններին եւ ամհատ մտաւորականներին՝ սատար կանգնելու այս գործին:



Պ.- Հէնց այս տրամաբանութիւնից ելնելով՝ մենք դիմեցինք 20 հայկական միութիւնների, Ազգային Առաջնորդարանին, Հայ Կաթողիկէ Առաջնորդարանին, Հայ Աւետարանական Առաջնորդարանին եւ նոյնիսկ հայ Բողոքականներին:

Հ.- Այս տարի Դուք մաս էիք կազմում այն ուխտատրոնների, որոնք մեկնեցին Ս. Թադէի վանք: Արդեօք դա անձնակա՞ն ցանկութիւն էր, թէ յիշեալ կենտրոնի կողմից առաքելութիւն ունէիք:

Պ.- Երկուսն էլ կար: Կենտրոնը ցանկանում էր լրացուցիչ տեղեկութիւններ հաւաքել Ս. Թադէի վանքի մասին, ուխտատրոնների անելիքների մասին եւ այլն: Քանի որ այս տարի Արամ Վեհափառը ներկայ էր այնտեղ, հետեւաբար ժողովուրդը աւելի մեծ խանդավառութեամբ էր մասնակցել:

Ինչ վերբերում է կենտրոնին, սպա պէտք է ասեմ, որ արդէն ուղարկել էին նկարահանողներ եւ պատասխանատու անձինք: Ես էլ հարկ եղած դէպքում, մասնակցում էի Կենտրոնի կողմից կազմակերպւած հարցազրոյցներին: Կենտրոնի կողմից հայկական բաժնի ընդհանուր պատասխանատու էին նշանակել ինձ:

Հարկ են համարում նշել՝ այնտեղի սուղ հնարարութիւնները եւ պայմանները: Այնտեղ էին եկել մի քանի երկրների դեսպաններ, բարձրաստիճան կառավարական պատասխանատուներ, լրագրողներ, հեռուստատեսութեան ներկայացուցիչներ, «A.P.» գործակալութեան ներկայացուցիչը, գիտնականներ, զբօսաշրջիկներ եւ այլն:

Կարծես՝ այդ ուղղութեամբ որեւէ աշխատանք չէր տարւել, կեցութեան համար ամենատարրական միջոցները բացակայում էին:

Թեհրանից Վեհափառին ուղեկցող կազմը, իրօք շատ վատ տպաւորութիւն թողեց: Կարծէք թէ միայն իրենք լինէին այնտեղ, նրանց համար ժողովուրդ, հասարակութիւն գոյութիւն չունէր: Այնպէս էին վերաբերում, որ որեւէ լրագրող կամ անհատ չէր համարձակւում Վեհափառին մօտենալ: Նրանց այս տհաճ վերաբերմունքը նոյնիսկ երեխաների վրայ էլ էր ազդել: Նրանք հարցնում էին «Միթէ՞ Յիսուսը երեխաներին չէ՞ր սիրում, ուրեմն ինչո՞ւ Վեհափառը չմօտեցաւ երեխաներին»: Կարո՞ղ էր բացատրել, թէ այս ի՞նչ վերաբերմունք էր:

Հ.- Լսել ենք, թէ նախօրօք եղել է մի գեղեցիկ առաջարկ: Այդ առաջարկի հիման վրայ՝ ուխտագնացութիւնը պիտի ղեկավարէր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. Վեհափառը եւ նրան պէտք է ուղեկցէր Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա. Վեհափառը, ինչը կը նպաստէր հայ ժողովրդի միասնականութեանը: Ո՞րն է Ձեր կարծիքը այդ մասին:

Պ.- Եթէ դա ընդառաջէր՝ իրօք կը նպաստէր հայապահպանման եւ միասնականութեան գործին: Չարմանալին այն էր, որ Արամ Վեհափառը բոլորին ներկայացնում էր որպէս ողջ աշխարհի հայութեան հոգեւոր Առաջնորդ, այլ կերպ ասած՝ «Ամենայն Հայոց Կաթողիկոս»: Միթէ Հայաստանեաց Առաքելական Եկեղեցին քանի՞ Ամենայն Հայոց Կաթողիկոս ունի: Արդեօք այդպիսով մենք մոռացութեան չէ՞նք տալիս Մայր Աթոռը: Այստեղ նաեւ անտեսել էին Հայաստանի դեսպանին: Նա որպէս դեսպան ներկայացնում էր Հայաստանը, ինչո՞ւ պիտի անտեսէր:

Հ.- Դուք ծանօթ էք վանքերի վերանորոգման գործընթացին:

Պ.- Այո, ծանօթ եմ: Այդ գործին անձամբ մասնակցում եմ: Իրանի «Մշակութային Ժառանգութիւն» կոչւած հիմնարկութիւնը այդ գործի համար ջանք չի խնայում, սակայն ցաւօք նրանք ծանօթ չեն հայկական ճարտարապետութեան ինքնատիպ ճաշակին: Այդ հարցով նրանք յաճախ դիմում են Ազգային Առաջնորդարան: Այս խընդրին Իրանի Առաջնորդութեան նախարար՝ պրն. Մոհաջեբանին ամանձին հոգատարութեամբ է վերաբերում: Այստեղ իհարկէ չպիտի մոռանանք «Ուրարտու» կազմակերպութեան կողմից «Ծոր Ծորի» վանքի շինանարութեան հետ կապւած՝ 13 տարւայ նիւրեալ աշխատանքը: Այդ կազմակերպութիւնը ղեկավարում է պրն. Վարուժան Առաքելեանը:

Հ.- Թադէի վանքում լրագրողները բողոքում էին, թէ պատասխանատուները եւ կարգապահները նրանց նկատմամբ վատ վերաբերմունք են ցուցաբերել: Ի՞նչ տեսակէտ ունէք այս մասին:

Պ.- Միայն նրանց նկատմամբ չէր, որ այդպիսի վերաբերմունք է ցուցաբերել: Այնտեղ Վեհափառին բարի գալուստի խօսք ասելու համար եկել էին Իրանի «Բռնիադ ՄոսթաֆաՖան»-ի կողմից: Այդ կազմակերպութեան պատասխանատուին թոյլ չտրեց նոյնիսկ իր ուղերձը ընթերցել: Նոյն տհաճ վերաբերմունքը դրսեւորեց պատերազմից վերադարձած եւ այնտեղ ներկայ հայ հաշմանդամների նկատմամբ: Նրանք օրեւան չգտնելու պատճառով գիշերները վանքի մէջ էին լուսացնում:

Հ.- Ի՞նչ կասէիք Հայաստանում եւ Իրանում տեղի ունեցող արտագաղթի ցաւալի երեւոյթի մասին:

Հասարակական

Պ.- Բարոնես Զօքսի նամակում նույնպես ակնարկ կար այդ իրականության մասին: Այդ ցաւալի երեւոյթը իրօք գոյութիւն ունի: Դա այսօր դարձել է մեր ամենամեծ հիմնախնդիրը: Բանը նրանումն է, որ կարծես որոշել են հայաթափ եւ քրիստոնէաթափ անել Հայաստանն ու նրա հարեւանութեամբ գտնուող երկրները: Իսկ ինչ մնում է մեր ժողովրդին՝ մի մասը իհարկէ երիտասարդներ են, որոնք բողոքում են գործազրկութիւնից, քանկութիւնից եւ այն, որ իրենց եկամուտը չի համապատասխանում ծախսերին: Նման դժարութիւնները կարելի է հարթել: Դա մնում է մեր ազգային մարմիններին, մեծ բարերարներին եւ բարեգործական տարբեր կազմակերպութիւններին: Օրինակ՝ կարելի է մի հայկական Ֆոնդ կեանքի կոչել եւ հրաւիրել հայ բարերարներին, որոնք իրենց օժանդակութիւնը բերեն մմանատիպ ազգային գործերին: Փաստը ապացուցել է այն, որ եթէ մեր ժողովուրդը հաւատայ, թէ իր թողած նպաստը իր իսկ նպատակին կը ծառայի, եւ չեն կասկածում, որ ամենայն սիրով ներդրումներ կանի:

Այսօր հայ ընտանիքը 10-12 միլիոն բուման վճարում է միայն «վիզա» ստանալու համար, մինչդեռ այդ նոյն գումարով կարող է մի համեստ տուն գնել եւ բնակարանի հարցը լուծել: Էլ չեն ասում, որ հայն Ամերիկայում ապրելով ինչպիսի սև գործեր է կատարում, որ ամերիկացին խուսափում է դրանցից: Այսօր մեր հայկական դպրոցներում շաբաթական երկու ժամ են հայերէն սովորում, էլ չեն ասում՝ դա ինչ հայերէն է: Այս հարցերը պետք է լուծում գտնեն:

Հ.- Դուք մատանցեցիք մեր ուսման հարցը, իսկապէս իրաւացի էք, բայց ի՞նչ կարելի է անել ուսման, մանաւանդ հայոց լեզուի մակարդակը բարձրացնելու համար:

Պ.- Իհարկէ աշակերտը դպրոցում պիտի սովորի, բայց հիմնական հարցերից եւ ամենակարեւորներից մէկը մեր հայ ուսուցիչների մակարդակն է: Ես չեմ ցանկանում որեւէ մէկի գործը թերագնահատել, բայց բոլորս էլ գիտենք որտեղ ենք կանգնած: Ինչո՞ւ մեր ազգային իշխանութիւնը եւ Կրթական Խորհուրդը մասնագէտ-ուսուցիչ չի հրաւիրում Հայաստանից, միթէ դարձեալ «կարգերի» մտավայելութիւնն է: Մինչեւ ե՞րբ պիտի մեր սիսալը շարունակենք: Այսօր մեր միութիւնները արդէն ունեն իրենց հայաստանցի արեստագէտ ուսուցիչները, որոնք իրենց փորձերով հաստատել են համեստիս կարծիքը: Ինչո՞ւ ուսման հարցում էլ նոյնը չկիրառենք:

Վերջում պարտք են համարում նշել Թադէի վանքում մի գեղեցիկ երեւոյթի՝ «Կոմիտաս» երգչախմբի հմայիչ ելոյթի մասին, որի խմբավարն էր հանրայայտ նկարիչ եւ երգահան՝ պրն. Վարդան Վահրամեանը: Երգչախմբի ելոյթը իրօք մեծ տպատրութիւն գործեց ներկաների վրայ: Ի դէպ՝ Վ. Վահրամեանը մեծ նկարիչներ՝ Մարոս եւ Գրիգոր Վահրամեան ամուսինների գաւակն է:

Թղթակից.- Ընդհակադրութիւն Ձեր ժամանակը մեզ տրամադրելու համար: ■

*Հարցազրոյցը վարեցին՝
Անահիտ Բարումեանը եւ
Վաչիկ Վարդանեանը*

Համամասնական, թե՞ մեծամասնական

ԿԸՅ-ի մամուլի երկրորդ ասուլիսը

(Շարունակութիւն՝ Նախորդ համարից)

Ռ. Կորիւն
Ռ. Սարգսրեան

«Լոյս».- Եթէ հայկական քաղաքամասերում հանդիպումներ են կազմակերպում՝ Պատգամատրական ժողովի եւ Թեմական Խորհրդի գործունէութեան հետ կապած, արդե՞օք անելի լաւ չէր լինի Պատգամատրական ժողովի եւ Թեմական Խորհրդի ներկայացուցիչը ներկայանար եւ համապատասխան տեղեկութիւններ փոխանցէր ժողովրդին:

ԿԸՅ.- Մենք դա թողել ենք միութիւններին կամ որեւէ կազմակերպող յանձնախմբին: Եթէ դրա կարիքը զգացում է, թող ապա իրենք հրաւիրեն ցանկացած մարմնի ներկայացուցիչին: Ես չեմ կարծում նման հրաւերները մերժեն: Իսկ դրա որոշողը մենք չենք:

«Լոյս».- Ընտրութիւնների քրական հաստատել է «Ներքին Գործերի» նախարարութեան կողմից, թէ ոչ:

ԿԸՅ.- Ոչ, դեռ քանակցութիւններ ենք վարում:

«Լոյս».- Արդե՞օք այդ «10 տարւայ փորձ ունենալու» պայմանը ՊԺ-ի կողմից պետք է հաստատուի՞:

ԿԸՅ.- Ոչ, Թեմի կանոնադրութեան մէջ այդ մասին խօսք չկայ: Առաջադրած պայմանները եկել են ԿԸՅ-ի որոշումներից:

«Լոյս».- Քարոզչութեան ընթացքում եթէ վարկաբեկումներ լինեն որեւէ թեկնածուի նկատմամբ, արդե՞օք ԿԸՅ-ը լիազօ՞ր է կանխելու այդ երեւոյթը, կամ մեղաւորին որեւէ պատժի ենթարկելու:

ԿԸՅ.- Մենք այդ գործնական ուժը չունենք, հաւանական մեղաւորին պատժելու համար: Մեր խորհուրդը այն է՝ ամեն թեկնածու ճանաչի իր սահմանները: Մեր ժողովուրդը, զիտակից ժողովուրդ է: Նա իր ձայնը կը տայ նրան՝ ով արժանի է: Պարզ է, որ նման կերպար ունեցող անձինք չեն պաշտպանի ժողովրդի կողմից: Ժողովուրդը համակրում է նրան, ով առողջ դատողութիւն ունի:

«Լոյս».- Բւեների հաշարկման յօդաժի երկրորդ կետում նշւած է որ, եթէ քեւարկողների եւ քեւաթերթիկների քանակը չհամապատասխանի միմեանց, ապա այդ դէպքում դուրս կը բերուեն անելող քեւաթերթիկները: Արդե՞օք լաւ չէր լինի նման դէպքում չեղեալ համարել տեալ քեւատուփի մէջ եղած քեւները:

ԿԸՅ.- Եթէ նման մի բան նկատուի, անպայման կը բեկանուի այդ շրջանի ընտրութիւնները: Ընտրութիւնը բեկանելու համար թեմի կանոնադրութեան մէջ կան յստակ կէտեր: Եթէ կոպիտ խախտում լինի, կարելի է բեկանել: ■

Շար. 2 եւ վերջ

ՇԱՐՑԱԶՐՈՅՑ ԺԱՐՏԱՐԱԳԵՏ՝ ԱՐՄԷՆ ՇԱԽՆԱԶԱՐԵԱՆԻ ՇԵՏ

Թղթակից.- Նախ՝ թոյլ տւեք «Լոյս» երկշաբաթաթերթի անունից շնորհակալութիւն յայտնել Ձեզ՝ Ձեր ժամանակը տրամադրելու եւ հարցազրոյցին մասնակցելու առիթով:


Յարգելի դոկտոր, չնայած, որ համայնքում Դուք ճանաչած անհատ էք, այնուամենայնիւ կը խնդրէիք ներկայանալ:

Պատասխան- Իհարկէ ինձանից ւաւելի շատ հայրս է ճանաչւած, որը ոչ միայն եղել է «Քուշեշ Դաւթեան» եւ «Մարիամեան» դպրոցների տեսուչ, այլ նաեւ մեծ դեր է խաղացել ազգային կեանքում:

Ես մասնագիտութեամբ ճարտարապետ եմ, ուսանել եմ Գերմանիայում, համալսարանում դասաւանդում եմ «Քաղաքաշինութեան հիմունքներ» առարկան: Արդէն երկու տարի է, որ Հայաստանում եմ աշխատում, ցանկանում եմ որոշ չափով մասնակից դառնալ Հայաստանի բարգաւաճման գործընթացին: Նման մօտեցմամբ, համոզուած եմ, որ անպայման կը գտնեմ գործընկերներ: Եթէ մէկը ասի, որ չի կարող երբէք աշխատել Հայաստանում, դա նշանակում է, որ նա չունի համապատասխան համբերութիւն, նրբանկատութիւն եւ, գոնէ համեստ հայրենասիրութիւն: Եւ կրկին ուզում եմ շեշտել, որ այս քայլով մենք կարող ենք միայն մասնակից դառնալ, մեր փոքրիկ լուծանքները Հայաստանի դրութեան բարելաւման համար եւ ուրիշ ոչ մի բան: Այս գործում է, որ մենք պէտք է համոզուենք արժանի ենք հայ եւ հայաստանցի կոչւելու, թե՞ ոչ: Քաղաքացիութեան իրաւունքը երկնքից չի ընկնում, դա պէտք է ձեռք բերուի: Սփիւռքահայերս երբէք չենք ծառայել հայոց բանակում, որեւէ տուրք չենք վճարել, մեզանից շատերը ո՛չ բարոյապէս եւ ո՛չ էլ տնտեսապէս չեն օժանդակել Հայաստանին:

Հայաստանում ես համագործակցում եմ չորս կազմակերպութիւնների հետ. դրանցից մէկը՝ «Ռ-ԱԱ» կազմակերպութիւնն է, որի մասին ես ւաւելի մանրամասն կը խօսեմ, միւսը՝ «Երկիր եւ մշակույթ» կազմակերպութիւնն է, այն զբաղւում էր Ատրպատականում գտնուող հայկական եկեղեցիների վերանորոգման գործով՝ մինչեւ 1988-89 թթ., յետոյ ինչ-ինչ պատճառներով դադարեցրեց իր գործունէութիւնը: Այս նոյն կազմակերպութիւնը ունի իր մասնաճիւղերը Ամերիկայում, Կանադայում, որոնք եւս զբաղւում են հայոց եկեղեցիների վերականգնման աշխատանքներով: Երկրաշարժից յետոյ իր գործունէութիւնը ծաւալեց նաեւ Հայաստանում եւ: Արցախում: Բացի Ատրպատականից, յետագայում կազմակերպութիւնը իր աշխատանքի սահմանները տարածեց նաեւ Քեասրում. այս վայրը

գտնւում է Սիրիայում: 1989 թ.-ից յետոյ, ինչպէս արդէն ասացի, նոյն գործունէութիւնը սկսեց Հայաստանում, այստեղ արդէն մի քանի եկեղեցիներ են կառուցել,



վերանորոգել եւ յանձնել շահագործման:

Արցախում ես վերանորոգեցին որոշ եկեղեցիներ, դպրոցներ, բուժարան եւ այլն: Եւ ամենակարեւոր շինութիւններից մէկը՝ «Մատուցավանքը» նոյնպէս շուտով կը յանձնի շահագործման, նշւած կառոյցի համար տարուող աշխատանքների պատասխանատւութիւնը ինձ վրայ է:


Երբորդ կազմակերպութիւնը, որի հետ ես համագործակցում եմ, կոչւում է «Աիշ», սա ւաւելի շատ, բնապահպանութեամբ զբաղող կազմակերպութիւն է: Դժբախտաբար խորհրդային հասարակարգը մարդկանց սովորեցրել է շահագործել, այլ ոչ թէ օգտուել, շահագործել, իսկ յետոյ ինչ որ լինի՝ եղել է: Ջրից օգտւում են՝ աղտոտում են, օդը աղտոտում են, ծառերը կտրում են եւ այլն: Այս հոգեբանութիւնը աղէտ է մեր ժողովրդի համար: Այն փշուրը, որը մնացել է մեր լայնածաւալ Հայրենիքից, պէտք է փայփայեցնք, մտածւած օգուենք բնութեան կողմից պարգեւած բարիքներից: Եթէ բնութեան բարիքների հանդէպ մենք անխնայ վերաբերմունք ցուցաբերենք՝ չենք կարող շարունակել մեր կեանքը այս մի փոքրիկ հողակոյտի վրայ:

«Աիշ» կազմակերպութիւնը կեանքի է կոչւել եւ նպատաւում է, ինչպէս արդէն վերը նշեցի, Հայաստանում բնապահպանութեան ապահովման գործին: Օրինակ՝ Բուսաբանական այգում դեռեւս քիչ թէ շատ մնացած բուսականութեան պահպանումը մենք վերցրել ենք մեր վրայ: Ջրամատակարարման հարցն էլ մենք ենք լուծում: Յիշեալ նպատակով, մէկ-երկու շաբաթ առաջ, մենք կատարեցինք «Թուրքօ-պոմպի» բացումը: Այն իր ջուրը ստանում է Գետառ գետից, եւ Բուսաբանական այգու տարածքի մօտ 40%-ը սրա ջրով է սնւում: Այսպիսով՝ մենք աշխատում ենք քայլ առ քայլ իրականացնել կազմակերպութեան կողմից հետապնդող նպատակները:

Մշակոյթ

Չորրորդ կազմակերպութիւնը, որին ես համագործակցում եմ կոչւած է՝ Հայ Դատին օժանդակելու: Այստեղ աշխատում ենք ցեղասպանութեան վերաբերեալ եղած արխիւային փաստաթղթերի վրայ:

Ինչպէս տեսնում էք իմ ժամանակը լցւած է: Ասեմ, որ Հայաստանի ճարտարագիտական համալսարանում էլ կազմակերպել եմ դասընթացների մի փոքրիկ շարան: Բայց հիմնական իմ ուժերը ես կենտրոնացրել եմ «ՌԱԱ» կազմակերպութեան մէջ տարող աշխատանքներին: Սա Հայաստանից դուրս եղած հայկական ճարտարապետութեան յուշակոթողների, յուշարձանների հարաքարմամբ եւ ուսումնասիրութեամբ է զբաղում: Հայաստանում հիմա մենք ունենք մեր գրասենեակը, ուր կենտրոնացում են մեր արխիւները: Նպատակ ունենք այս արխիւները գալիք 4-5 տարիների ընթացքում համակարգչային ցանցի մէջ վերցնել: Միայն թէ, Թեհրան գալուցս մի քանի օր առաջ՝ մեզ յաջողեց համակարգիչները դուրս բերել օդանաւա-



կայանի մաքսատնից:

Հ.- Պրն. Հախնազարեան յայտնի է, որ Դուք երկար տարիներ ուսումնասիրել էք Արեւմտեան Հայաստանի յուշակոթողները, ի՞նչ ձեռքբերումներ ունեք:

Պ.- Կարելի է ասել, որ մենք շատ չնչին աշխատանք են տարել, եւ ես որեւէ չափանիշ չեմ կարող տալ դրանց վերաբերեալ: Օրեցօր մեր յուշակոթողները, հայերի հանդէպ բացասական վերաբերմունք ունեցող պետութիւնները, ոչնչացման են ենթարկում: Քանզի մեր յուշարձանները յուշում են, որ հայերը դարեր շարունակ բնակել են այդ տարածքներում, այսինքն՝ մեր պատմական հայրենիքում: Մենք ծաւալում աշխատանքներ ենք տարել այս յուշակոթողների մասին տեղեկութիւններ տալու, ուսումնասիրութիւններ կատարելու մէջ, եւ դրանք հրատարակել ենք տարբեր

լեզուներով՝ հայերէն, ռուսերէն, անգլերէն: Սա փաստ է եւ անժխտելի: Ներկայացնելով արեւտը, մենք ներ-

կայացնում ենք նաեւ քաղաքական փաստեր:

Բայց ի տարբերութիւն միւս հարեւան պետութիւնների, ինչպէս օրինակ՝ Վրաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի, Իրանական պետութիւնը, որը ճանաչւած է որպէս արմատական իսլամական պետութիւն, բացառութիւն է կազմում: Այստեղ պահպանում են, բոլոր հայկական ճարտարապետութեան արժէքները, նոյնիսկ դրանք յաճախ վերանորոգում են հէնց պետական Ֆինանսատրմամբ:

Հ.- Պրն. Հախնազարեան մեզ յայտնի է նաեւ, որ մշակութային գործունեութիւնից բացի, ունեցել էք նաեւ հասարակական ծաւալուն գործունեութիւն: Դուք ընդհանրապէս ի՞նչ կասէիք արտագաղթի նման ցաւալի երեւոյթի մասին:

Պ.- Իհարկէ շատ դժուար է պատասխանել այս հարցին, որը վերաբերում է արտագաղթին: Այո՛, արտագաղթը հայ իրականութեան մէջ ծանր երեւոյթներից մէկն է: Ես ականատես եմ եղել դրան թէ՛ Իրանում, թէ՛ Հայաստանում: Պարսկաստանը իր տարածքում ունի թէ՛ պատմական Հայաստան, թէ՛ պատմական Սփիւռք: Օրինակ՝ Նոր Ջուղան, Փերիան, Մալմաստը եւ այլն:

Իսկ Լոս Անջելեսը պատմական Սփիւռք չէ: Եւ այս նոյն վիճակը, դեռ ատելի շեշտւած, տիրում է Հայաստանում: Սա շատ մեծ հարցականի տակ է առնում Սփիւռքի գոյութիւնը: Իհարկէ այս ցաւալի երեւոյթի պատճառները չես կարող պարփակել մէկ-երկու նախադասութեան մէջ: Բայց հիմնական պատճառներից մէկը, դա գործազրկութիւնն է: Ես կարծում եմ, որ Հայաստանում ամենակարեւոր հիմնախնդիրներից մէկը հէնց այս խնդիրն է, ինչը լուծելու համար անհրաժեշտ է ստեղծել նոր գործատեղեր: Նախաձեռնողների թիւը զգալիօրէն ընդլայնել է:

Հ.- Պրն. Հախնազարեան, իսկ ինչպիսի՞ ծրագրեր ունեք ապագայում իրականացնելիք:

Պ.- Եթէ հէնց այս սկսած գործերս, ծրագրերս կարողանամ տեղ հասցնել, արդէն դա մեծ բան է ինձ համար:

Թղթակից.- Ժամանակի աղութեան պատճառով մենք ցանկանում ենք սահմանափակել այսքանով, եւ մէկ անգամ եւս շնորհակալութիւն յայտնել Ձեզ՝ Ձեր գոհացուցիչ պատասխանների համար: Յոյսով ենք, որ Ձեր հայրենանէր գործը կը հասցնէք իր ցանկալի ասարտին: ■

**Հարցազրոյցը վարեց՝
Վահիկ Վարդանեանը**

خدمات ساختمانی خانیان

ԽԱՆԵԱՆ

انجام کلیه کارهای لوله کشی گرم و سرد شوفاژ و تعمیرات،

نصب و سرویس بهداشتی - نقاشی

تلفن: ۸۴۱۶۳۹۱

Մշակոյթ

ՇԱՐՑԱԶՐՈՅՑ՝ ԸԱՅԱՍՏԱՆԻՑ ԸՐԱԿԻՐԻԱԾ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԸԵՏ

Հ.- Կը խնդրեմ ներկայանաք:

Պ.- Ռուզան Բաղդասարեան, «Մ.Ը.Ն.» մանկապատանեկան կրթամշակութային կենտրոնի հիմնադիր՝ նախագահ, մասնագիտութեամբ լրագրող եմ եւ լրագրութեան ասպարէզում եմ արդէն մօտ 22 տարի:

Հ.- Ի՞նչ նպատակով էք ժամանել Թեհրան:

Պ.- Ինչպէս գիտէք այստեղ դասընթացներ են կազմակերպել Հ.Մ.Ա.Կ.-ի «Արեւտից» միութեան կողմից: Եւ քանի որ «Մ.Ը.Ն.» կենտրոնն էլ լոյս է ընծայում մանկապատանեկան մամուլ եւ գրականութիւն, ունի պատանի լրագրողների դպրոց: Ինձ հրաւիրեցին Թեհրան, որպէսզի պատանի լրագրողների խմբակներ հիմնենք՝ այս ամառային աշխատանքների ընթացքում եւ նախապատրաստական աշխատանքներ տանենք: Եւ շուտով առաջին նիւթերը կը տպագրենք:

Հ.- Մեր երեխաները ի՞նչ տպաւորութիւն թողեցին Ձեզ վրայ, եւ դա որքանով էր տարբերում Ձեր նախնական պատկերացումներից:



Պ.- Երեխան՝ երեխայ է ամէն տեղ, երեխան վեր է ամէն տեսակ կուսակցական գաղափարներից, ամէն տեսակ կաղապարներից եւ ամենուր երեխան ունի իր ինքնատիպ աշխարհը, որը երեխայից- երեխայ իհարկէ տարբեր է, բայց ինքնատիպ է եւ հետաքրքիր՝ ուշադրութեան արժանի: Ես այստեղ տեսայ այնպիսի երեխաներ, ինչպիսին են, մեր երեխաները՝ մեր կրթամշակութային կենտրոնում: Մեզ մօտ էլ 6-ից 12 տարեկան երեխաներ են յաճախում, միակ զանազանութիւնը, որը գալիս է այն «Մփիտք» հակասութիւնից, դա այն է, որ այստեղի երեխաները, ցաւօք, մտածում են գուցէ պարսկերէն եւ նոր միայն իրենց միտքը քարգմանում են հայերէնի: Օրինակ՝ այսօր դասի ժամանակ երեխաները սովորում էին, թէ ինչպէս պէտք է կարողանան գրի առնել գրոյցը, եւ երեխաներից մէկը, քանի որ չէր հասցնում հայերէն գրել, հայերէն բառերը

գրում էր պարսկերէն տառերով: Սա կարելի է ասել, որ բնորոշ է բոլոր երեխաներին, քանի որ հայերէն տառերի մի մասին նրանք ծանօթ չեն, ծանօթ չեն նաեւ բառերին: Մենք փորձում ենք դասերի ընթացքում հէնց տեղում շտկել դրանք: Սա անհրաժեշտ է, քանզի, ինչպէս գիտէք, լրագրութիւնը՝ եւ հաղորդակցութիւն է որը անց ենք կացնում բանաւոր եւ գրաւոր խօսքով, նախ՝ զարգացնում ենք պատկերաւոր մտածողութիւնը, լեզուն, բառապաշարը եւ յետոյ միայն գրում տպաւորութիւններ, յօդածներ եւ այլն: Երբեմն երեխաները գրած յօդածը բերում են աջից ձախ գրած վիճակում, այսինքն՝ առաջին էջը պէտք է թերթել վերջից:

Հ.- Իսկ աշխատանքի ընթացքում որեւէ խոչընդոտի հանդիպե՞լ էք:

Պ.- Այստե՞ղ:

Հ.- Այո:

Պ.- Ընդհանուր առմամբ, կարծում եմ, որ ոչ, իհարկէ խոչընդոտներ ամէն աշխատանքի մէջ էլ կը լինեն եւ բնական է: Եթէ խոչընդոտ չկայ, ուրեմն աշխատանք չկայ: Ընդհանուր վերցրած չեմ կարծում, չէ չկայ, որովհետեւ նոյնիսկ երբեմն ես չեմ էլ զգում, որ հայաստանից եմ, քանզի մեր շրջապատում հիմնականում հայեր են, երբէք միայնակ չենք: Միակ խոչընդոտը՝ լեզականն է:

Հ.- Ինչպե՞ս էք զգում Ձեզ՝ ընտանիքից հեռու լինելով:

Պ.- Շատ դժար է: Օրինակ՝ այսօր ամուսինս նամակ էր ուղարկել: Ես իմ ամենափոքր երեխային գալուցս առաջ խաղալիք շնիկ էի նիւրել՝ ձագուկը շնիկի մէջքին նստած եւ ասել էի, թէ սա մաման է, սա էլ Յովնանն է: Այսօր նամակի մէջ կարդացի, որ ամէն գիշեր երեխան դրա հետ է քնում: Կարօտել եմ ընտանիքս, երեխաներիս, իհարկէ աշխատանքը, այս գրադասութիւնը մի փոքր թոյլ չի տալիս, որ երկար մտածես ընտանիքիդ մասին: Բայց սա իմ ընտանիքից բաժանման առաջին փորձն է՝ շատ ծանր է:

Հ.- Իսկ երեխաները դասընթացները ասարտելուց յետոյ որեւէ քննութեան կը ենթարկե՞ն, թէ ոչ :

Պ.- Մեր փորձի եւ քննութեան արդիւնքը պիտի լինի մանկական էջերի պատրաստումը, որպէսզի ծնողները ակնանտես լինեն ստացւած արդիւնքին: Տեսնեն իրենց երեխայի տպագրւած պատմւածքը, հեքիաթը, թղթակցութիւնը, նկարները, մի խօսքով՝ աշխատանքը, դա էլ հէնց կը լինի արդիւնքը: Այլապէս երեխաները կարող են խռտնել, յոգնել, մանաւանդ, որ ամռան ընթացքում են կազմակերպել դասընթացները: Այդ պատճառով աշխատում ենք դա անելի շուտ խաղային եղանակով իրականացնել, որպէսզի երեխան խաղալով սովորի: Եւ եթէ գլխի ընկնի, թէ այստեղ յաճախում է սովորելու համար, սպա տհաճութեամբ կը յաճախի, ուստի եւ ոչ մի քննութիւն չենք անցկացնի: Ես նոյնիսկ

Մշակոյթ

այս առաջարկութիւնը Հայաստանում են արել հան-



րակրթական դպրոցների տարրական դասարանների համար: Քննական այն առարկաները, որոնք դնում են փոքրերի համար, դա շատ սխալ է, որովհետեւ երեխան հակադրելու է ի վերուստ, իր բնութեամբ նա այդպիսին է: Մանաւանդ, երբ նա գիտի, թէ դա գիտելիք է, գիտութիւն է, որը ինքը պետք է պարտադիր կերպով սովորի: Հաստատեցի՞ք, որ երեխան մի երկու տարի յետոյ տեղափոխւում էր կը սովորի, իսկ երբ ինքը գիտի խաղում է, աւելի հաճոյքով է դա անում: Ասենք՝ գնացքով ինքը պիտի ճանապարհորդի դէպի այսինչ վայրը, պետք է հաշի, թէ քանի՞ կիլոմետր է մնացել հասնելու համար: Ինքը չի հասկանում, որ մատենատիկա է սովորում, բայց արդիւնքում սովորում է: Նոյնը եւ կիրառում են հաղորդակցութեան մեթոդներում: Առհասարակ հաղորդակցութիւնը՝ որպէս գիտութիւն, աւելի շատ խաղային, աւելի շատ հեքիաթի ձեւով պետք է մատուցի: Երեխան ինքը պիտի չիմանայ, թէ ի՞նչ է վերնագիրը՝ բանաձեւով: Նա այնքան պետք է խաղայ, մինչեւ որ վերջում եւ ասեմ նրան, թէ սա արդէն վերնագիրն է: Նա չպիտի իմանայ, ի՞նչ է նշանակում գրի առնել հարցազրոյց՝ ըստ բանաձեւի: Երբ մի քանի անգամ փորձում ենք, յետոյ եւ ասում են, որ դա արդէն կոչում է հարցազրոյց: Փաստօրէն երեխան պետք է գործնական աշխատանքից անցնում կատարի տեսականի, այլ ոչ թէ հակառակը:

Հ.- Ձեր վերջին խօսքը, մտորանքը:

Պ.- Խօսքս հետեւեալն է, քանի որ «Լոյս» երկշաբաթաթերթը կարդում են բոլոր միութիւններում հասանաբար, կուսակցութիւնից բարձր բան է, վեր կամ կողք կանգնած թերթ, իմ խնդրանքն է ընթերցողներին տեղեկացնել, որ արւեստի դպրոցը ստեղծւած է թեհրանահայ ողջ համայնքի երեխաների համար, անկախ իրենց միութենական պատկանելութիւնից: Մենք ինքներս էլ կուսակցական չենք, եւ Հ.Մ.Ա.Կ.-ն էլ իր առջեւ կուսակցական որեւէ խնդիր այս ծրագրի մէջ չի դրել, ամառային աշխատանքների նպատակը իսկապէս բարձր է, վեհ է:

Ձար. տեսնել էջ 14-ում

ԱՊՐՈՒՄՆԵՐ

Գրիգոր Զաքինեան

Ամեն մի հայ սրտի խորքում՝ Արարատի կենտրոն ունի, Ամեն մի հայ իր աչքի մէջ՝ Արարատը իր մօտ ունի, Երբ նայում ես լուսաբացին՝ հարսնաքօղի մնան շքեղ, Հարսի մնան շուքը բոլոր, աղամանդէ մարտ ունի:

Ես էլ մի հայ, հայի աչքով ո՞նց չնայեմ Արարատին. Ո՞նց չնայեմ լուսապակ, արծաթափայլ վեհ զագաթին. Թէ չնայեմ՝ անօթ հայիս, ամօթանքի թուքը կրեմ, Ամօթանքի կնիքը թող խարազանի իմ ճակատին:

* * *

Ինձ ասում են,- Միշտ տխուր ես.

Միշտ մռայլ ես ու կոպիտ,-

Ինձ ասում են,- Դու միշտ լուռ ես,

Չունես դէմքիդ դու ժպիտ,-:

Ես ասում եմ՝ սիրոս բացէ՛ք՝

Որքան մտք է նա, քնքուշ,

Միրոս բացէ՛ք եւ իմացէ՛ք,

Միրոյ վարդ է՝ առանց փուշ:

* * *

Երբ որ կեանքդ ձախողւում է,

Մոլորում ես- վայ ես դառնում,

Բախտդ քեզից խռովում է,

Որոշներին թայ ես դառնում...

Զգոյշ եղի՛ր, մի մոլորի՛ր,

Թափառական հայ ես դառնում,

Քանի շուտ է՝ վերադարձի՛ր,

Տես՝ հասարակ բայ ես դառնում...

* * *

Որքան անուշ բան ես, մուրազ,

Բայց թէ երբեք չես կատարում,

Միշտ ապրում ես ինչպէս երազ,

Թէկուզ փուշ ես, չես դադարում:

Խաղ եւ խաղում սրտերի մէջ,

Դու տանում ես՝ մենք ենք տարում,

Յոյսի կրակ ես մի անշէջ.

Դու ապրում ես, մենք ենք վառում...

❖ ❖ ❖

Լազերի... Ձար. էջ

-Տղէք ջան, թողէք գնամ... էլ ոտքս եւ ափում չի լինի,- քափանձեց նա ետ-ետ գնալով: Յետոյ արագ շրջեց և դուրս վազեց լաբորատորիայից:

Լսի՛ր, ասարդ մտացար,- հետևից գոռաց Գերան:

-Անուշ արեք, տղէք ջան,- արդէն ափից արձագանքեց ձախտող ձկնգողը:

Վերջապէս բոլորը կարող էին լիաթոք հռչակ:

-Ես ձեր տեղն առանձնապէս չէի հրճի,- նենգ ժպտալով Գերան դիմեց տղաներին:

-Ինչո՞ւ:

-Եթէ յիշողութիւնս ինձ չի դաւաճանում, վաղը դուք էք հեքիաթահեմ խոհանոցում... Ուրեմն, հիմա իսկական ժամանակն է մաքրել այս ձկները, որպէսզի չփչանան: ■

Ստացված գրուքիւն



ԾՅԷՃ, 14 ԱՅՕԷՅ
 ԱՊՈՅ ԿՇ ՍՆՇ ՈՏՅ Ի ՅՅ ԻՕՁՕ
 ՏԷՁՍԷՄՈՅ ԻՕՁՕ ԿՇ ԿՇ ՈՅ ԵՅ -
 ՈՅ Ի Յ Ի Յ ԿՇ ՈՅ Ի Յ ԿՇ ԿՇ ԿՇ
 ԵՅ Ի Յ ԿՇ ԿՇ ԵՅ ԿՇ ԿՇ ԿՇ ԿՇ ԿՇ ԿՇ
 ԱՊՈՅ ԿՇ

Որեւէ հայատառ ու հայաբոյր մամուլ աշխարհի որ անկեան մեջ ալ լոյսին գայ, կ'ուրախացնէ մեզ:

Ու հիմա՝ ձեր «ԼՈՅՍ»-ը, յարգելի խմբագիր, որուն 3,4,5,6 յաջորդական քիւերը շնորհակալութեամբ ստա-ցած են: Ամէն անգամ, որ մամուլի նոր օրգան մը հրատարակ կուգայ եւ գոր տեսնելու առիթը կունենան, ուրախութիւն մը կ'ապրին մտածելով որ ի հեճուկս մեր շրջապատին մեջ ապրող բազմաթիւ յոռետեսներու, մեր գաղութները ոչ միայն ունին հայ գիրի երթը շարունակել ուզող երէցներ, այլ ունին նաեւ երիտասարդներ:

Ձեր շուրջ ունիք աշխատակիցներու բանակ մը, որ քերթիդ գոյատեւումը կրնայ ապահովիլ բարոյապէս: Ֆի-մանասականը նոյնքան կարեւոր է: Ո՞վ պիտի միտքապէս ապահովի «ԼՈՅՍ»-ին գոյատեւումը: Իրանի հայ գաղութը անցեալին հայ գիրքի համար ունեցած է բազում մեկեանսներ: Այսօր եւս կրնայ ունենալ:

Որեւէ քերթ, ուր ալ հրատարակի, իր գոյատեւումին աղբիւրը պէտք է նկատի տեսալ մամուլին լոյս ընծայման վայրը:

Գիտցեք, որ Լիբանանի մեր օրաթերթերն անգամ մեծ դժարութիւններու առջեւ կը գտնուին եւ հազարաւոր սօ-լարներ պարտքերի տակ են:

Ձեր «ԼՈՅՍ»-ը ուրախութիւն պատճառեց ինձի իր մաքուր տպագրութեամբ, գունատիպ կազմով եւ ըստ բաւականի անկողմնակալ բովանդակութեամբ: Այդ է հայ մամուլին պարտականութիւնը՝ իր ընթերցողները մղել միասնականութեան: Միքորայները բաժանելով կը բազ-մանան, մենք՝ բաժնելով կը տկարանանք:

Ահա թէ ինչու լրի կ'երկրորդիմ Անդրանիկ Խեչում-եանի յօդածի միտքերը մայիսին քիւն մեջ:

Եթէ մէկը գրող է, մեր պարագային հայ մեծ գրող, անիկա չի կրնար պատկանիլ որեւէ կուսակցութեան. կը պատկանի ամբողջ հայ ժողովուրդին: Վահան Տէրեան մը Լենինին մօտիկ ըլլալով հանդերձ չի պատկանիր Հա-մայնավար կուսակցութեան, այլ կը պատկանի ամբողջ հայ ժողովուրդին:

Նմանապէս Ռուբէն Զարդարեանը կամ Միամանթօն ոչ թէ Գաշնակցութեան, այլ ամբողջ հայ ժողովուրդին կը պատկանին:

Ժամանակն է, որ մեր մտաւորականութիւնը գտնու ազգային միասնութեան շարքում մը, որ ընդգրկէ ամբողջ սփիւռքը ու հայրենիքը միաժամանակ:

«ԼՈՅՍ»-ին մէջ զանազանութիւն գտայ, Իրանահայ կեանք, Իրանական լուրեր, Առողջապահական եւ մար-գական բաժին, թարգմանութիւններ, գրական բաժին:

Միքիլի Հայկ Գարագաշի մասին գրած յօդածը: Այս անունին ծանօթ են «Վերածնունդ» քերթէն, որուն խմբա-գիրն էր բազմաշխատ այս մտաւորականը: Թերթ գոր կունենայի՞նք Կիպրոսի Մելքոնեան կրթ. հաստատութեան

մեջ 1944-1946 տարիներուն, մեր պատանեկութեան շրջա-նին:

Լաւ են ձեր հարցազրոյցները նաեւ թէ տեղական հե-ղինակաւոր անձնաւորութիւններու, թէ՛ հայրենական:


Մէկ խօսքով ձեր մեկնարկը թէ՛ լաւ է, թէ՛ յուսադրիչ: Իրանահայ գաղութը, վստահ են պահած ուժեր ունի: Պէտք է բացայայտել:

Անձնապէս գրած են չորս մենագրութիւն Իրանահայ գաղութին մասին: Արտակ Սրբազանի, Գալուստ Խաննե-ցի, Արմանտի եւ Վարանդի մասին, երբեւէ նկատի չունե-նալով անոնց աշխարհահայեացքը:

Գրողը միաւորող ուժ պէտք է ըլլայ, այլ ոչ տարան-ջատող:

Ընդունէք խնդրեմ յաջողութեան մաղթանքներս՝

Թորոս Թորանեան



Մենք մեր դիտարկումներն ասացինք, թէ ինչ տարբերու-թիւններ ենք տեսնում, ուրեմն այդ տարբերութիւնները դեռ մենք կողքից ենք տեսնում, սակայն դուք շատ աւելի լաւ էք տեսել, համայնքին սպառնացող ուժացման վտանգը: Հայա-պահպանման կարեւորութիւնը զգալով է, որ բաւականին գումարներ, միջոցներ են տրամադրել եւ կազմակերպել են այս դասընթացները: Ծնողները սա պէտք է ըմբռնեն եւ բերեն իրենց երեխաներին այստեղ, որովհետեւ ժամանակը կարճ է, քայց այդ ժամանակը գոնէ սեր պէտք է ներարկի դէ-պի հայութիւնը եւ ձգտում, որպէսզի երեխան հայերէնը լաւ սովորի, իր հայոց պատմութիւնը, գրականութիւնը լաւ իմա-նայ: Խնդրանքս սա է, որ շնորհակալութիւն յայտնելով Հ.Մ.Ա.Կ.-ին այս ազգանէր աշխատանքը կազմակերպելու համար, խնդրել բոլոր միութիւնների անդամներին, որպէսզի նման ծրագրերը աջքաթող չանեն: Իրանահայ գաղթօջախը Հայաստանի համար շատ մեծ կարեւորութիւն ունի, քանզի մենք անընդհատ ձեր ներկայութիւնը մեր կողքին զգում ենք: Եւ ուզում են Սեպուհ Սրբազանի մի շատ գեղեցիկ արտայայտութեամբ ասարտել խօսքս, նա երեխաների հետ հանդիպման ժամանակ ասաց. - «Թեւրանի հիսիսից փչող քամին անգամ՝ հայաստանաբոյր է»: Ուրեմն սա գիտակ-ցենք եւ այս բոլոր ձեռնարկները, որոնք Հայաստանի հետ են կապուած, համարենք հիսիսից մի քամի, որը Հայաստանից եկաւ ձեզ համար: ■

Շարագրոյցը վարեց Անի Նազարեանցը



ՈՍԿԷ ՕՂԱԿՆԵՐ

ԼՈՅՍ երկշաբաթաթերթը ջերմօրէն շնորհա-ւորում է նոր անուսնացած սիրելի զոյգերին:

Իրինա Ալազեան – Սերժիկ Յովսէփեան
 Թալին Մուսայեան - Արմէն Վարդանեան
 Արփիկն Տէր Գալուստ – Սաքօ Մկրտչեան

Մշակոյթ



Թրեզա
Քանքարեան

ԱՆՆ ԵՐԱՆԻ ԹԵ...

Երբ նայում եմ ես Ձեր պատկերներին
Ու խօսում ձեզ հետ. Ինձ քույր ե, քե՛ր
Խօսում եք ինձ հետ, Ինձ մօտ լինէ՛ք,
Ա՛խ երանի, քե՛ր Ինձ հետ լիսու՛՛ք
Մեծ է կակիծս՝ հիասդուքիւն է,
Անբուժելի ցաւ Ու տխրութիւն է:
Ծարաւ է հոգիս, Կարօտ է հոգիս.
Ձեզ է փափագում, Ձեզ է միշտ տենչում,
Իմ հարագատներ, իմ սիրելիներ:
Երանի՛, մայր իմ, Չծնէիր ինձ
Ու տէր չանէիր Էղ ցաւ ու դարդին,
Ա՛խ երանի, քե՛ր Ես տառապանքին:
Ձեզ հետ լինէ՛ք, Ձեզ մօտ լինէ՛ք,
Ու միշտ ձեր կողքին:

ՕՏԱՐ ԱՓԵՐ

Չմտածած կեանք, քե՛ր չգրած տողեր,
Ալիքներն անխիղճ, ալիքներն անգուսպ
Նետնեցին հետուն, Ինձ, օտար արիւն:
Մի օտար երկիր, Օտար դրութիւն,
Օտար միտ ու կաց, Օտար մարդկութիւն:
Մի կեանք անուրախ, Դժգոյն ու դժար,
Անդադար կարօտ, Անդադար փափագ:

Անդադար տենչանք, Անդադար տենչանք
Դէպի ապագայ:

ՄԱՅՐՍ

Մայրս քեզ մման Սիրուն է գարուն,
Քեզ մման քնքո՛ւշ, Անուշ է գարուն:
Մայրս գթութիւն, Ծով համբերութիւն,
Ու բարութիւն է: Մայրս քեզ մման Գարուն է գարուն:
Մայրս իմ կեանքն է, Մայրս իմ շունչն է,
Մայրս իմ քունն է, Մայրս իմ տունն է:
Մայրս իմ երակներում Հոսող արիւնն է:

ՄԵՋ ՉԻ ՊԱՏԿԱՆԻ

Մենք այս աշխարհի Կանաչն էլ լինենք,
Գարունը նոյնիսկ Մեզ չի պատկանի:
Մենք այս աշխարհի Արեւը լինենք,
Ամառը այրող Մեզ չի պատկանի:
Եւ քեկուզ լինենք Տերեւներն անգոյն,
Աշունը նոյնիսկ Մեզ չի պատկանի:

Իսկ եթէ նոյնիսկ փաթիլները ձեան՝
Չմեռն այս աշխարհի, Մեզ չի պատկանի:

ԻՆՉՈ՞Ւ

Ինչո՞ւ էք մարդիկ, մոռանում, քե՛ր ո՞վ
Թէ ո՞վ ձեզ ծնեց: Ինչո՞ւ էք մարդիկ, Մոռանում, քե՛ր ո՞վ,
Թէ ո՞վ ձեզ սնեց:

Միթէ աստած էք, Թէ աստծոյ որդի,
Աստծոյ որդուն էլ Մարիամն է ծնել:
Ինչո՞ւ այդքան շուտ Մոռացաք նրան,
Այն կաթը, որ ձեզ Ուժ տուեց, եռանդ:
Այն արիւնը, որ Դեռ մինչեւ հիմա,
Ձեր երակներում Եւ ձեր մարմնում է:
Այն սիրտը, որի Չարկերը ծանօթ
Դեռ մինչեւ հիմա Ձեր ականջում է:
Այն ձեռքերը տաք, Որ ձեզ գրկում ու
Մեղմում իւր կրծքին Եւ գուրգուրում էր:

Դրանք հիմա էլ Տաք են ու քնքուշ
Որ քույր է ձեզ Տատասկ են ու փուշ:
Թէ իմանար, իրեն Օրերից մի օր,
Մոռանալու են իւր գաւակները,
Միգուցէ կեանքում, էլ Մայր չլինէր,
Իսկ եթէ մայրը Չլինէր կեանքում՝
Կեանք էր չէր լինի:

* * *

Ի՛նչ կապոյտ են քո աչքերը,
Չինչ Մեան են քո աչքերը,
Ես էլ նաւակ մի մոլորած
Ալիքների բերանն ընկած:
Ու ամէն պահ քեզ տեսնելիս,
Ալիքները քո աչքերին
Կանչում են ինձ ու կուլ տալիս,
Տանում խորքը կապոյտների:

Խորտակել եմ քո աչքերում,
Քո աչքերի ալիքներում.
Ես մի նաւակ ծովաւատուած՝
Ալիքներդ ո՞ր են տանում:

☆ ☆ ☆

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

(Պատմական ակնարկ)

Ժամանակի ընթացքում կառավարող հիմնական կուսակցության ՀՅԴ իշխանատննչության, ինչպես նաև հանգամանքների թելադրանքով խորհրդարանի դերը գնալով նսեմացրեց յոգուտ կառավարության, իսկ 1920թ. Մայիսեան ապստամբության կապակցությամբ պետական կառավարման համակարգը կուսակցականացրեց (ողջ իշխանութիւնը անցաւ ՀՅԴ Բիւրօ-կառավարութեան ձեռքը), իսկ խորհրդարանը ուղարկեց հարկադիր արձակուրդ ու փաստօրէն չեզոքացրեց:

Չնայած այն ժամանակայ ժանր ու արտասովոր պայմաններին՝ Հայաստանի խորհրդարանը ինչպես հարկն է չկարողացաւ իրեն լիովին դրսևորել: Նա իր կարճատևն էր ընդհատումներով գործունեության ընթացքում չհասցրեց մշակել ու ընդունել սեփական (ազգային), պետաիրական ամբողջական ու կայուն օրէնսդրութիւն: ՀՀում հիմնականում շարունակում էին գործել ցարական Ռուսաստանի ու ժամանակաւոր կառավարութեան, Անդրկովկասեան կոմիսարիատի ու Մէյմի ընդունած օրէնքներով: Մեփական, ազգային առանձնա-յատկութիւններին բնորոշ ու հոգե-հարազատ օրէնքներ շատ քիչ ընդունեցին ու գործադրեցին, որոնք էլ բացասաբար անդրադարձան հանրապետութեան իրաւական հիմքերի ամրապնդմանը:

Անշուշտ, արեւտակարծ չէր Հայաստանի խորհրդարանը: Խորհրդարանի եւ նրա յանձնաժողովների գործունեութեան թոյլ կողմերից մէկն այն էր, որ ընդունած օրէնքների ճնշող մեծամասնութիւնը (շուրջ 90 տոկոսը) եղել են կառավարութեան ներկայացրած օրինագծեր: Օրէնքների պակասը մի կողմից եւ եղածների անկատարութիւնը միւս կողմից՝ ծնուն էին ան-իշխանական երեսյութեր՝ պանթալան, շահատակութիւններ, «մատգերիզմ» եւ այլն: Գրան մայաստում էին նաև հանրապետութեան արտաքին ու ներքին անկայուն պայմանները, հայկական հարցի լուծման ձգձգումը:

Այդուհանդերձ, Հայաստանի առաջին Հանրապետությունը իրենից ներկայացնում էր կազմակերպւած պե-

տութիւն, որի հիմքերի ամրակայմանը եւ զարգացմանը զգալի չափով օժանդակել է նրա խորհրդարանը:

1920թ. դեկտեմբերի 2-ի Երեսմի համաձայնագրով Հայաստանը խաղաղ ճանապարհով խորհրդայնացրեց: Գրա հետեւանքով, պետական իշխանութեան միւս մարմինների հետ միասին, դադարեց գործելուց նաև խորհրդարանը: Գրանից յետոյ, Խորհրդային Ռուսաստանի օրինակով, Հայաստանում եւս սկսեցին հիմնել իշխանութեան նոր ընտրովի մարմիններ, որոնք կոչուեցին Սովետներ (խորհուրդներ): Սակայն մինչև ընտրութիւնների միջոցով բանտրագիտա-

խորհուրդներ՝ զիւղական, գաւառային (շրջանային) եւ գաւառային:

1929թ. յունւար-փետրւարին հրապիրեց ՀԽՍՀ բանտրների, զիւղացիների եւ կարմիր զինտրների պատգամաւորների առաջին համահայտատանեան համագումարը, որի պատգամաւորներն ընտրել էին գաւառային համագումարներում: Խորհուրդների համահայտատանեան համագումարը ՀԽՍՀ բարձրագոյն իշխանութիւնն էր:

Համագումարը եւ նրա օրակարգի հարցերն ու ընդունած որոշումները (օրէնքները) կոչւած էին ամրապնդելու խորհրդային իշխանութիւնը եւ նշելու նոր կեանքի կառուցման ուղիները:

Հայաստանի խորհուրդների համագումարին ներկայ էր 252 պատգամաւոր, վճռական եւ խորհրդակցական ձայնով: Նրանք ներկայացնում էին հանրապետութեան բոլոր հասարակական խաւերն ու դասակարգերը, կուսակցական ու ազգային կազմը: Պատգամաւորների մեծ մասը հայեր էին եւ կոմունիստական կուսակցութեան անդամներ: Ընդ որում կոմունիստ պատգամաւորների բաժինը զգալիօրէն մեծ էր հասարակայնութեան մէջ նրանց ունեցած տեսակարար կշիռը: Այս եւ այլ օրինաչափութիւնները բնորոշ էին իշխանութեան բոլոր մարմինների համար խորհրդային ժամանակաշրջանում:

Հայաստանի խորհուրդների առաջին համագումարի օրակարգի համաձայն քննարկուեցին հետեւեալ հարցերը.

Հայաստանի կառավարության՝ ժողովրդական կոմիսարների խորհրդի հաշիւտութիւնը, նոր տնտեսական քաղաքականութիւնը, զիւղատնտեսութիւնը եւ հողային քաղաքականութիւնը, Կոոպերացիայի մասին, սոցիալական ապահովութեան ժողովրդական կոմիսարիատի հաշիւտութիւնը, Կարմիր բանակի մասին, ՀԽՍՀ Մահմանադրութեան ընդունումը, Անդրկովկասեան դաշնութեան (Ֆեդերացիա) ստեղծումը, ՀԽՍՀ Կենտրոնական Գործադիր կոմիտէի (ԿԳԿ) ընտրութիւնները:



ցիական բոլոր աստիճանի խորհուրդները կը ձեւաւորէին՝ Հայաստանում ժամանակաւորապէս հաստատուեցին եւ գործում էին յեղափոխական կոմիտէները, որոնք, ի տարբերութիւն խորհուրդների, նշանակովի էին:

ԲԱՐՉՐԱԳՅՆ ԻԾԽԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՈՒՄ 1920-1991 ԹԹ.

Յեղկոմների գործունեութիւնը շարունակուեց մինչև 1921թ. վերջերը, երբ տեղի ունեցան աշխատատրների պատգամաւորների խորհուրդների ընտրութիւնները: Ընտրուեցին հանրապետութեան բոլոր աստիճանների

Ճար. 3

Բժշկական հարցումներ Տաքացման և սառեցման բուժման եղանակներ

*Թարգմանեց՝ Լեւոն Ահարոնեանը
(Շելթ ամսագրից)*



Շարք.- Լարած մկանների և մեջքացալի համար, արդեօ՞ք գոյություն ունեն տաքացման կամ սառեցման բուժման եղանակներ:

Պ.-Ընդհանրապես հնուց մարդու մկանների, նեարդերի և ծայրամասերի այտուցների բուժումը կատարում էր սառույցի կոմպրեսով և քինոլի փաթեթներով: Սառեցման եղանակը պետք է կիրառի անմիջապես վիրատուրեւոց յետոյ: Հակառակ դեպքում՝ անմիջապես տաքացնելը կարող է վատ վիճակի հասցնել բորբոքումն ու այտուցը: Սառեցման եղանակը ունի իր բազմաթիւ առաւելութիւնները:

Նեարդները սառեցնելով՝ ցարը նւագում է, մկանային հիւսածքների լարածութիւնը իջնում է և արեան անօքների նեղացում է առաջանում, որի հետեւանքով կասեցում է արիւնահոսութիւնը և քչանում է այտուցը, Հիսամինի (ցաւ պատճառող կենսամիջոց) քանակը իջնում է և նոյնիսկ բորբոքումները վերանում են:

Մի խօսքով՝ սառեցման եղանակով դադարեցում է արիւնահոսութիւնը, իջնում է այտուցը և վերանում է բորբոքումը:

Տաքացումը նւագեցնում է ցարը և ջղաձգութեան պատճառով դառնում, բայց դա ունի նաև իր բացասական կողմերը: Տաքացման հետեւանքով թուլանում են մկանները, նօքրանում է արիւնը և արեան անօքներում արեան հոսքը արագանում է, որը վիրատուր մասի այտուցի պատճառով դառնում և արագ ձեւով վնասած մասում առաջանում է ցաւ ու այտուց և նեարդների լարածութիւն:

Սառեցման եղանակը անմիջական օգնութեան մի լաւ միջոց է, այն չեզոքացնում է վերը նշած որոշ լարածութիւնները:

Յետագայ օրերին օրգանիզմի բնական պաշտպանութեան մեխանիզմը իր դրական ազդեցութիւնն է թողնում, այդ պահին տաքացումը օգտաւէտ է դառնում և վիրատուրած մասի արեան անօքներում արեան հոսքի արագութեան պատճառով:

Օրգանիզմի վիրատուրած մասերի սառեցման բուժման եղանակի կիրառումը եթէ մի քանի օր երկարատեւի, կառաջանայ արեան հոսքի դանդաղեցում՝ արեան անօքներում:

Երբ առկայ են վիրատուրած և ճնշած մկաններ, այտուց և բորբոքում, տաքացման բուժման եղանակը չպետք է կիրառի, որովհետև դա կը խաթարի բորբոքումն ու այտուցը:

Թաց տեսակ սառեցման կամ տաքացման միջոցները աւելի խոր են թափանցում վիրատուրած հիւսածքներ, քան թէ չոր տեսակը:

Յաճախ սառը կոմպրեսի փաթեթը 2.5-5 սմ. թափանցում է վիրատուրած մասի խորքը: Սառույցը կամ սառը կոմպրեսը օգտակար է լինում ուժեղ ծեծած մկաններին:

Միանւագ տաքացրած փափուկ բարձրիկի տաքութիւնը թափանցում է 1.5 - 2.5 սմ. մաշկի տակ, բայց թաց և տաքացնող լամպերն կարող են տաքութիւնը 2.5 սմ. փոխանցել մաշկի խորութեանը: ■

Անքնուրիւն

Շարք.- Ես 68 տարեկան առողջ մի մարդ եմ, բայց վերջին տարիներին աստիճանաբար նւագում է քունս, ին բժշկելս դէմ է դեղորայքի օգտագործմանը, բայց ես յոյս չունեմ, որ կը յաջողի կրկին 8 ժամ քնելու կարողութիւնը ձեռք բերել: Յաճախ եմ ինձ յոգնած զգում, կարող է՞ք արդեօք մի բուժման եղանակ ինձ առաջարկել:

Պատ.-Զանի որ հանգստաղցնող դեղորայքի ազդեցութիւնը կարճատև է անքնութեան բուժման համար, տարեցների դեպքում դա բոլորովին յարմար բուժման եղանակ չի հանդիսանում: Անքնութիւնը սովորական պայմաններում գոյացած մի անհանգստութիւն է, և այդ կարգի թմրացուցիչ դեղորայքը ոչ միայն կարող են սպառողին մոլի դարձնել, այլ դրանց ազդեցութեան տակ տարեցները՝ կորցնելով իրենց հասասարակչութիւնը հնարաւոր է աստօվթարի դեպքում կարող են գօտկատելի կտորածք ստանալ: Առաջանում է նաև յոգնածութիւն: Կլինիկական վիճակագրական տեսակները ցոյց են տալիս, որ քնաբեր դեղերի բուժման եղանակը աւելի քիչ է ազդում, քան թէ այն բուժման եղանակը, որը կոչւում է Cognitive Behavioral Therapy (CBT), որը կեանքի դաստորման բուժման միջոց է և անքնութեան բուժման համար մարդիկ ստանում են առողջապահական վարժեցման ցուցմունքներ:

Եթէ դուք հնարաւորութիւն չունեք շարաթը մէկ ու կէս ժամ տրամադրելու այս խմբային վարժութիւններին ու աշխատանքներին, այդ դեպքում կարող էք ուղղակի դիմել մասնագէտներին և օգտուել նրանց խորհուրդներին:

Սահմանափակէք ձեր անկողնում մնալու ժամերը և միայն քնելու ժամանակ մտէք անկողին: Եթէ դուք 8 ժամ մահճակալում էք անց կացնում, դրանից միայն 6 ժամ էք քնում, սպա այս պարագայում պետք է նւագեցնէք անկողնում եղած ժամերը, հակառակ դեպքում անկողինը դառնում է ընթերցելու, հոգսերի մասին մտածելու կամ հեռուստացոյց դիտելու վայր, մտէք մահճակալ, երբ իսկապէս զգում էք, որ քնկոտ էք:

Աշխատէք միայն քնելու և սեռային յարաբերութեան համար օգտուել ննջասեներակից:

Անկողին մտնելուց 20 րոպէ յետոյ եթէ չկարողանաք քնել, մահճակալից բարձրացէք և գնացէք մէկ այլ սենեակ, դա կրկնէք եթէ կէս զիշերին նորից արթնանաք և անքնութեան մատուցէք: Չեք ցերեկային քունը սահմանափակէք մէկ ժամով կամ աշխատէք ժամը 15.30-ից յետոյ քնել: Սովորութիւն դարձրէք ամէն առաւօտ միեւնոյն ժամի արթնանալ, անկախ նրանից, որ դուք անցեալ զիշեր քանի ժամ էք քնել, կատարէք ձեր առօրեայ վարժութիւնները և աշխատէք դա կատարել քնելուց 3 ժամ առաջ:

Զննելուց 6 ժամ առաջ աշխատէք չսնել կամ չուտել որեւէ ըմպելիք կամ ուտելիք, որը իր մէջ պարունակում է կաֆէին: Զննելուց առաջ խուսափէք ալկահոլային խմիչքներից:


Եթէ ունեք խրոնիկ անհանգստութիւններ, օրինակի համար սեւամատիզն կամ մեջքացաւ, որ ձեր անքնութեան պատճառ են դառնում, այդ ցաւերը հանգստացնելու համար դեղորայքը քնելու պահին օգտուէք:

Կատարէք օրգանիզմը հանգստացնող որոշ աշխատանքներ, օրինակի համար քնելուց առաջ տաք ջրով լողացէք և եթէ դուք զգում էք, որ կարիք ունեք մի քնաբեր դեղահատիկ, ձեր բժշկի հետ խորհրդակցէք եւ օգտուէք սահմանափակ ժամանակաշրջանում, համատեղ CBT-ի վարժութիւններ կատարելու ընթացքին օգտուէք դեղերից և դա աւելի երկարատեւ բուժման պատճառ կը դառնայ: ■

ՖՈՒՏԲՈՒԼԻ ԸԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

ԱՆԿԻՆԱՅԻՆ ԸԱՐԻԱԾ

Գնդակի փոխանցում անկլինային հատվածներից, որոնք գտնուում են խաղադաշտի չորս անկյունում եւ ունեն մէկ մետր շառաւիղ: Անկլիններում տեղադրւած են յատուկ դրօշակներ: Կանոնը կեանքի է կոչել 1873թ. եւ պատժում է պաշտպանող թիմին, որի խաղացողը գնդակը դուրս է հանել ճակատային գծից: Անկլինային հարածը վտանգաւոր սպառնալիք է: Այն իրականացում է դէպի մրցակցի տուգանային հրապարակ գնդակի «կախումով», կամ «կրակոցային» փոխանցումով եւ գրոհողներին, յատկապէս գլխով արդիւնաւետ հարածի լաւ հնարատրութիւն է ընձեռնում: Անկլինային հատածից հարածը երբեմն փոխանակւում է գնդակի խաղարկմամբ՝ կարճ փոխանցումներով: Անկլինային հարածի ժամանակ մրցակիցները պէտք է գնդակից հեռու կանգնած լինեն առնուազն 9մ: Պատահում է, երբ դարպասը գրաւուում է ուղղակի անկլինային հատածից՝ գնդակը պատեցնող հարածով: Հայկական Ֆուտբոլում անկլինային այդպիսի հարածների վարպետ էր Ս.Հովհեանը:



ԱՆՐԱՍԱԿԱՆ ԽԱՂ

Ֆուտբոլի առանձին գործողութիւնները դաշտում, որոնք անխափան լինում են ամբողջ թիմի խաղի հետ, թափ են հաղորդում գրոհներին, նպաստում խաղային առաւելութեան ձեռքբերմանը: Բարձր տեխնիկայ եւ արագ վազք ունեցող Ֆուտբոլիստը կարող է միայնակ, ստեղծագործաբար լուծել խաղային տեսալ իրադրութեան խնդիրները՝ արագ վարել գնդակը, շրջանցել մրցակիցներին, խաբս տալ կամ մի քանի պաշտպանի: Նման վարպետները, յատկապէս դաշտում հանպատրաստի ստեղծագործական խաղ ցուցադրողները, իրենց կողմը գրաւելով երկու, նոյնիսկ երեք պաշտպանի, խախտում են մրցակցի պաշտպանական ուժերի տեղաբաշխման համակարգը, թիմակիցներին հնարատրութիւն են տալիս տիրելու տարածութիւնը, ժամանակին ու նախաձեռնութեանը եւ, այդպիսով, խաղացողների քային հաւասարակշռութեան պայմաններում ապահովում են իրենց թիմի առաւելութիւնը մրցակցի նկատմամբ:

Պաշտպանութիւնում անհատական խաղը միայնակ հսկողութիւնն է, մրցակցի դէմ անհատական պայքարը գնդակի համար:

ԱՆՏՈՆԵԱՆ ՎԱՍՏԵՐ (ծնւ. 1936թ.)

Յարձակ-տող: Մալբոսի վարպետ: Տեխնիկատակտիկական լաւ պատրաստականութեամբ Ֆուտբոլիստ- խաբի եւ փոխանցման վարպետ, դիպուկ հարւածող: 1960-63թթ. Երեւանի «Մպարտակ» եւ «Արարատ» թիմերի կազմերում հանդես է եկել ԽՍՀՄ առաջնութեան բարձրագոյն խըմբում: Անցկացրել է 104 խաղ, խփել 23 գոլ: 1965թ. ԽՍՀՄ առաջնութեան առաջին խմբի մրցաշարի յաղթող եւ փոքր ոսկե մեդալակիր:

ԱՃՆԱՐԿԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆուտբոլային խոշորագոյն մրցումներն աշխարհում, որ ՖԻՖԱ-ն անցկացնում է 1930-ից, արհեստավարժ հաւաքականների միջեւ: Աշխարհի առաջնութիւնները նախապէս անւանում էին «Աշխարհի գաւաթ»: 1946թ. դրանք, ի պատիւ ՖԻՖԱ-ի նախագահի, վերանանուցին «Տիլ Ռիմէի գաւաթ», այնուհետեւ՝ «Աշխարհի գաւաթ - Տիլ Ռիմէի գաւաթ», աւելի ուշ՝ «Աշխարհի առաջնութիւն - Տիլ Ռիմէի գաւաթ»: Երբ Բրազիլիայի հաւաքականը 1970թ. երրորդ անգամ նւաճեց այն եւ, ՖԻՖԱ-ի կանոնադրութեան համաձայն, ընդմիջտ տիրացաւ դրան, սկսեց խաղարկել նոր մրցանակ՝ «ՖԻՖԱ-ի աշխարհի գաւաթը», որը փոխանցել է: Աշխարհի առաջնութիւններն անցկացում են չորս տարին մէկ, ընտրական փուլի մրցումները յաջողութեամբ յաղթահարած ազգային հաւաքականների մասնակցութեամբ: Առաջօր կայացել է 15 առաջնութիւն: 1942 եւ 1976թթ. այդ մրցումները չեն անցկացւել համաշխարհային երկրորդ պատերազմի պատճառով: Աշխարհի չեմպիոնի կոչման ամենից շատ տիրացել է Բրազիլիայի հաւաքականը՝ չորս անգամ, երեքական անգամ ուժեղագոյն են ճանաչւել Իտալիան ու ԳՖՀ-ն, երկուսն էլ՝ Ուրուգուայը եւ Արգենտինան, մէկ անգամ՝ Անգլիան:

ԱՌԱՆՑ ԳՆՂԱԿԻ ԽԱՂ

Ֆուտբոլի կարեւոր բաղկացուցիչ մասը կազմող գործողութիւն: Ֆուտբոլիստի վարպետութիւնը յաճախ պայմանաւորւած է առանց գնդակի խաղով. հաշտեցկատ վազք, խելամիտ տեղաշարժ, ազատ գոտու, հարւածային դիրքի ճիշտ ընտրութիւն եւ այլն: Այս ամենն անակնկալի է բերում մրցակցին, սրտիւն հաղորդում խաղին: Իհարկէ, առանց գնդակի խաղն իմաստաւորում, արդիւնաւետ է լինում, եթէ թիմակիցների գործողութիւններում կայ փոխըմբռնում:

ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Մրցում, որն ի յայտ է բերում աշխարհի, աշխարհամասի, երկրի, քաղաքի (եւ այլն) ուժեղագոյն թիմի, որ կոչւում է չեմպիոն: Երկրի առաջնութիւնը, որպէս կանոն, անցկացւում է շրջանաձեւ մրցակարգով. բոլոր թիմերը խաղում են միմեանց հետ, իրենց եւ մրցակիցների դաշտերում: Մրցման այն ձեւը հնարատրութիւն է ընձեռնում ճիշտ որոշելու մասնակից թիմերի ուժերը եւ ըստ այդմ տեղաբաշխելու մրցաշարային աղիւսակում: Առաջնութիւնում առաջին երեք տեղը գրաւած թիմերը պարգեւտրում են ոսկե, արծաթե եւ բրոնզե մեդալներով: ■



Հարցազրույց

Հ Թ à î Է Չ Ø Æ

հետք

Թղթակից.- «Լոյս» երկշաբաթաթերթի անունից շնորհակալությամբ ենք յայտնում Ձեր ժամանակը մեզ տրամադրելու կապակցությամբ:

Կը խնդրենք համառոտ կերպով ներկայացնեք Ձեր կենսագրությունը:

Պ.- Ծնել եմ Եալտայում, ապա տեղափոխել եմ Իրան, հիմա էլ բնակվում եմ Ամերիկայում՝ դարձել եմ ամերիկացի, բայց իրականում միշտ եղել եմ հայ եւ կը մնանք հայ:

Հ.- Ո՞րտեղ էք ստացել Ձեր կրթությունը:

Պ.- Բարձրագույն կրթություն ստացել եմ Թեհրանի ճարտարապետական համալսարանում, իսկ հայկական կրթություն ստացել եմ Էնգելի քաղաքում, սակայն յետագայում դպրոցը փակվեց եւ ստիպւած եղանք յաճախել պարսկական դպրոց: Հայերէնով զբաղել եմ միայն ընթերցանութեան միջոցով: Հայրիկս հացթուխ էր, իհարկէ սկզբնական շրջանում բազում նեղութիւններ կրեց, սակայն յետոյ մեծ համբաւ ձեռք բերեց: Այն աստիճան, որ երբ մենք ցանկանում էինք տեղափոխուել Թեհրան տեղի բնակչութեանը մեծ ցաւ պատճառեց այդ հանգամանքը:

Երբ քոլէջ յաճախեցի, բոլորն ասում էին, որ այս Աշոտը յայտնի հացթուխ Աւետիսի տղան է: Այս առումով ես հայրիկիս նախանձախնդրութեամբ էի մօտենում, մտածելով, որ արդեօ՞ք կը գայ այն օրը երբ կասեն, որ սա յայտնի Աշոտի հայրն է: Բայց եկաւ մի ժամանակ, երբ ես կարողացայ դասել Իրանի համբաւոր մարզիկների շարքը, աւա՛ղ, հայրս մահացաւ, ապա մենք տեղափոխուեցինք Ամերիկա եւ դեռ Ամերիկայում էլ ինձ ասում էին, թէ սա հացթուխ Աւետիսի տղան է:

Հ.-Պրն. Աշոտ, ինչպէ՞ս եղաւ, որ Գուք ներքաշեցիք մարզանքի ասպարէզ, եւ ո՞րտեղից սկսեց դա:

Պ.- Յիշում եմ, որ դեռ հայոց դպրոցից սկսած, ես իմ մասնակցութիւնն էի բերում սկաուտական խմբի աշխատանքներին, իհարկէ երկարատեւ չեղաւ, քանի որ Ռեգա շահը գահ բարձրանալով՝ արգելեց մման կազմակերպութիւնների գործունէութիւնը եւ փակեց բոլոր հայկական դպրոցները: Բայց չեմ կարողանում մոռանալ մեր բանակումները, այդ ժամանակ ես երեխայ էի: Մարզանքի հանդէպ ունեցած նախասիրութիւններս առաջ եկան հէնց այդ ժամանակ: Յետագայում, երբ ընդունեցի քոլէջ ընդունելութեան քննութիւնների ընթացքում էլ զգացի, որ թէ՛ իմ առողջական, թէ՛ մարզական ընդունակութիւններս ներում են՝ հանդէս գալու համար մարզական ասպարէզում:

Հ.- Ո՞ր մարզաձեւով էիք աւելի շատ զբաղւում:

Պ.- Ես աւելի շատ զբաղւում էի Ֆուտբոլով եւ նոյնիսկ ընդգրկեցի Իրանի ազգային հաւաքականի մէջ, յետոյ անցայ Թենիսի: Այս մարզաձեւում էլ մեծ յաջողութիւններ ձեռք բերեցի, կրկին խաղացի Իրանի ազգային թիմում, ճամբորդեցինք Իրաք, Թուրքիա, որտեղից էլ յաղթանակներով վերադարձանք:

Հ.- Ո՞ր թականից էք Իրանի ազգային հաւաքականում խաղացել:

Պ.- Կոնկրետ թականը հիմա չեմ յիշում, բայց երիտասարդ եմ եղել՝ 20-25 տարեկան, խաղացել եմ անգլիացիների, թուրքերի, ռուսների դէմ կայացած խաղերում:



Հ.- Իսկ Իրանի ո՞ր թիմերում էք հանդէս եկել:

Պ.- Նախ՝ ես խաղացել եմ «Սպորտ» թիմում, ապա երբ այս թիմը ցրեց եւ յայտնի խաղացողները գաղթեցին Հայաստան, ես ներգրաւեցի «Գոշարիւտասարան» թիմի մէջ, որը յետագայում վերանանուեց «Թաջ», սրանից յետոյ էլ կոչեց «Էսթելլալ»: Իհարկէ «շապիկա» երբէք չեմ փոխել՝ արարատական եմ եղել, միայն թէ պաշտօնապէս համարել եմ «Թաջ» թիմի աւագը: Մինչեւ օրս էլ ես «Թաջ» թիմի անդամ եմ, խաղում եմ կապոյտ շապիկով:

Հ.- Գուք ասացիք, որ մարզել էք նաեւ Թենիսի ասպարէզում եւ, նոյնիսկ խաղացել էք թենիսի ազգային հաւաքականում, կը խնդրէիք որոշ բացատրութիւններ տայիք մեր ընթերցողներին:

Պ.- Ես չորս տարի եղել եմ թենիսի Ֆեդերացիայի նախագահ: Այս ասպարէզում ունեցել եմ նաեւ բազմաթիւ յաջողութիւններ: Յատկապէս չեմ մոռանում մեր խաղը Անկարայում թուրքերի հետ, երբ իրանական թիմը պարտութիւն կրեց, եւ ես միակն էի, որ ախոյեանին պարտութեան մատուցեցի:

Հ.- Իրանում բացի մարզական ասպարէզից ուրիշ ի՞նչ ասպարէզներում էք եղել, կամ ի՞նչ բնագաւառներում էք աշխատել:

Պ.- Նախ՝ ես աշխատել եմ ամերիկեան ընկերութիւններում՝ ճարտարապետական ասպարէզում: Ապա

Մարզական

անցել են ծառայութեան իրանական հիմնարկութիւնում, որը կոչուում էր «Բիմէյէ Իրան»: Պաշտօնավարել են շինարարական ապահովագրութեան բաժնում: Աշխատել են Շիրազում, Բանդար Աբբասում:

Հ.- Ի՞նչ էք կարծում, Ձեր ժամանակներում հայերը ի՞նչ դեր են խաղացել Իրանի մարզական կեանքում:

Պ.- Իրանահայութիւնը միշտ էլ լաւ մարզիկներ է ունեցել: Ես յիշում եմ, որ դեռ երբ ես սովորում էի քոլէջում, եւ մարզական կեանքը գտնուում էր ցածր մակարդակի վրայ, կրկին հայերն էին, որ մեծ համբաւ էին վայելում: Ուզում եմ յիշել Ալէքսանդր Դաւթեանին, Սերոժ ՄաՖարեանին, Վարուժ ՄաՖարեանին, Արտուշ Սարգսեանին, Ժորժ Նալբանդեանին, Փիեռին, Հրաչին, Հրանտին՝ Նոր Ջուղայից: Իհարկէ այն ժամանակ մեր հայ մարզիկների որակը արեւելի բարձր էր, քան հիմա:

Հ.- Ո՞ր երկրներում էք հանդէս եկել մարզախաղերով:

Պ.- Իրաքում եւ Թուրքիայում: 4 տարի մասնակցել եմ թենիսի միջազգային համաժողովներին, հեծանիւով ճամբորդել եմ Փարիզ, Լոնդոն՝ որպէս Իրանի եւ հայութեան դրօշակակիր:

Հ.- Իսկ Հայաստանում եղե՞լ էք:

Պ.- Այո, 1963 թականին՝ «Թաջ» խմբի պատասխանատուների շարքում:

Հ.- Ինչո՞ւ էք արտագաղթել Ամերիկա, ո՞րն է եղել դրա պատճառը:

Պ.- Նախ արտագաղթեցին զաւակներս, որոնք յետոյ մեր հովանաւորութեան կարիք ունեցան: Այդ պատճառով էլ մենք գնացինք:

Եւ արդէն 10 տարի է, ինչ ապրում եմ Ամերիկայում, սակայն կարօտելով Իրանը՝ չորս անգամ այցելել եմ:

Հ.- Եթէ առիթ ունենայինք կրկին վերադառնալու Իրան, ինչպէ՞ս կը վարուէք:

Պ.- Իրանը իմ ծննդավայրն է, ուր ես ծնել, մեծացել եմ, որին ես անկեղծ սիրել եմ: Իհարկէ դեռ փոքրուց մենք երազել ենք ապրել մեր պապեմական հայրենիքում՝ Հայաստանում, սակայն կեանքի հողովոյթը այլ կերպ է ընթացել եւ մենք ստիպուած ենք եղել ենթարկել դրան: Ես կը ցանկանայի 6 ամիս երեխաներիս մօտ ապրել, ապա գոնէ 3 ամիս լինել Հայաստանում եւ 3 ամիս՝ Իրանում:

Հ.- Ինչպիսի՞ն է Ձեր կարծիքը հայ ազգային կուսակցութիւնների մասին:

Պ.- Իմ կարծիքով կուսակցութիւնը՝ թիրիմացութիւն է: Ամէն մարդ պէտք է ունենայ իր սեփական մտածելակերպը, որը պէտք է յարգի բոլորի կողմից:

Եւ քարկոծելը, ոտնակոխ անելը, որեւէ բանի թելադրանքը չափազանց սխալ բաներ են: Իհարկէ սփիւռքում անհրաժեշտ են միութիւնները, բայց պէտք է յարգի ցանկացած մարդու կարծիքը, տեսակէտը, մանաւանդ մարզական բնագաւառում:

Հ.- Ձեր տպաւորութիւնները ամերիկահայ գառթօջախի մասին: Ի՞նչ խորհուրդներ կը տայիք մեր իրանահայ երիտասարդներին:

Պ.- Շատ բարդ հարց է ինձ համար, որպէս մի մարզիկ, բայց կը փորձեմ պատասխանել: Ազգապահպանման նպատակով տարուող աշխատանքները այստեղ արեւելի ակտիւ են, քան Ամերիկայում: Յատկապէս այս երեսոյթը ես նկատեցի «Նարմաք» քաղամասում եղած միութիւններում: Իհարկէ Ամերիկայում էլ կան մնան միութիւններ, սակայն նրանց կողմից տարուող աշխատանքները այդքան էլ արդիւնաւետ չեն:

Հ.- Ո՞րն է Ձեր պատգամը իրանահայութեանը:

Պ.- Իրանահայութիւնը արեւելի մօտ լինելով հայրենիքին, պէտք է իր յարաբերութիւնները սերտացնի մեր հայրենակիցների հետ: Ամերիկայում արեւելի հեշտ է ուրանալ հայրենիքը, ազգութիւնը, սակայն այստեղ էլ ես նկատել եմ այդ երեսոյթը:



Հ.- Ձեր կարծիքը իրանահայ մամուլի մասին:

Պ.- Ես առաջ ծանօթ էի միայն «Ալիք» օրաթերթի հետ, ճիշտ է այն կուսակցական օրգան է, բայց ես այդպէս չեմ նայում խնդրին, մենք պէտք է դա նայենք որպէս համահայկական մի մամուլ, որը շատ կարեւոր դեր է խաղում իրանահայ ազգային կեանքում, նոյնն էլ «Արարատ» միութիւնը, ուր ամէն հայ, անկախ իր կուսակցական պատկանելութիւնից, կարող է գնալ եւ օգտուել հայերի հետ շփելու հաճոյքից: Նման կարծիք ունեն մատ «ԲաՖՖի» միութեան վերաբերեալ: Մենք պէտք է մոռանանք նախկինում առաջ եկած անհիմն քիմախնդրութիւնը եւ նախ եւ առաջ լինենք հայ:

Հ.- Ի՞նչ կարծիք ունեք «Լոյս» երկչարաթաթերթի մասին, եւ որո՞նք են Ձեր սպասելիքները:

Պ.- Անանուճը սքանչելի է, հրատարակողներն էլ լաւ մարդիկ են, գնահատելի անհատներ, թերթն էլ՝ իր բովանդակութեամբ հաճոյք է պատճառում եւ ունի գեղեցիկ ձեւաւորում:

Հ.- Կը խնդրէինք որոշ տեղեկութիւններ տայիք Ձեր կողմից գրած յուշերի մասին:

Պ.- Բազում տարիներ է, որ ցանկութիւն ունեմ հրատարակել դրանք: Թուրքիայով անցնելիս ես վախեցնում էի դրանք հայերէնով գրել, սակայն երբ հասել եմ Յունաստան, դրանք հայերէնով եմ գրել: ■

Շրջագրոյցը վարեց՝

Ռաֆիկ Օրուջեանը

Ժամանց

ԽԱՉԲԱՆՔ ՀԱՄԱՐ 7

Կազմեց՝
Կ.Տ.Յովհաննիսեան

Շորիզոնական

1. Հայրենի մեծ երաժշտագետ, դիրիժոր - ջրային փոխադրամիջոց:
2. Քաղաք՝ Էստոնիայում, որի համալր-սարանում սովորել է Խաչատուր Աբովեանը- տեղեկություն հաղորդող անձ կամ պարբերական:
3. Առանց կասկածի, հաստատապէս-կենսական անհրաժեշտութիւն ունեցող բնական տարր:
4. Որոշւած վճար- աստաճաղաւանութիւն- ցուցական դերանուն:
5. Ծախելու մեջ ժուժկալ- ոչ առաջ-հաւաք, դասատուրած:
6. Թուրքմենական գիղատիպ աւան-կլոր շրջանակ- վիտամիններով հարուստ անենօրեայ ուտելիք:
7. Երկթեւ միջատ- երգող, երգային- երգանման:
8. Բուժավայր օժտուած բնակլիմայական պայմաններով- աշխարհագրական գօտի- մակերեսի միատոր:
9. Աջից՝ պատ- բերդապահ (հին բառ):
10. Աջից՝ հարցական բառ- լեհական տիտղոս- չսկսած ցաւ...- մանր:
11. Թանկագին մետաղից պատրաստուած- թոքերի հիւանդութիւնների ընդհանուր ախտանշան- վարելու միջոց:
12. Արական կրճատ անուն - Վասկօ Դա...՝ պորտուգալացի ծովագնաց (1469-1524) - հոլովակերտ մասնիկ-թռչնածայն:
13. Անճնական դերանուն- պալատի գլխատըր դարպաս- անիւ:
14. Անուանու մահամբ մենակ մնալ- տղամարդկային:
15. Կուի ժամանակատըր դադար- տալիս են ընտրելու համար- համար:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1											■				
2							■								■
3										■		■			
4	■		■				■			■			■		
5					■			■		■				■	
6				■					■						
7					■										
8							■					■			■
9		■				■								■	
10				■				■			■				
11	■					■						■			
12					■					■			■		
13			■								■			■	
14									■						
15								■				■			

Ուղղահայեաց

1. Հնում՝ հիւրասենեակ- եկեղեցական սպասատըր- դասադրար սպանեց Խոսրով արքային:
2. Հաւայեան Կողմերի մայրաքաղաքը- արական անուն:
3. Գիւղական աշխատավայր- խումապարար- տագնապ բարձրացնող անձ- գլխատուած Արա...:
4. Առհասարակ նիւթական օգնութիւն- ոչ ուղիղ- հագնելիքներից:
5. Պարսից արքաներից մէկի անունը արական անուն- ժամանակահատուած- մեղաբրտական աշխատանք:
6. Յածից՝ գրատըր լրատու օրգան- երկիր Ա.Ֆրիկայում:
7. Երգ- բազմաթիւ:
8. Առհասարակ գեղարեստական կատարում- մեխանիզմ- չբեր:
9. Արական անուն- նոր ազատած:
10. Ծանձաղուտ մտած նա...- ցածից՝ չարքաշ կենդանի- բացականչութիւն՝ հեռու ինձանից, քեզանից իմաստով:
11. Բազուկը փաթաթելու կտոր- յագեցած- ձայնանիշ:
12. Յածից՝ բարձրացիր- ...Լիզա Դալիանի նշանատըր պատուաբը- ցամաք- գիւղական աշխատանք:
13. Վայրի գագան- շինանիւթ է- առաջին կերակուրը:
14. Մարմնի գոյգ մասերից- անջուր- անորոշ բոյսերի ընդհանուր անուն- ազգութիւնը բնորոշող վերջածանց:
15. Վտարադի- հեծանիւղ առհասարակ այսպիսին է:

**ԼՈՒԾԵՔ
ԽԱՉԲԱՆՔ**
**ՍՏԱՅԵՔ
ՆԻԵՐ**

Խաչբառ համար 6-ի լուծուած տարբերակը տեսնել՝ էջ 22-ում:



ՕԳՈՍՏՈՍ

Հետաքրքրական է գիտենալ, որ այդ Աուգուստուս-Օգոստոս -ը իրականում ամենեւին էլ անուն չի եղել, այլ մականիւր-մականուն. բուն նշանակել է «սուրբ. վսեմ. վսեմափայլ. մեծապատիւ». լատիներէն augeo բայից է, որ ունէր «մեծացնել. գումարել. օժանդակել. յարգել. փառաբանել» եւ այլ իմաստներ:

Եւ տեսէք, թէ պատմութեան մէջ ինչ է տեղի ունեցել. ի պատիւ Յուլիոս Կեսարի ոչ միայն ամսանուն է ստեղծել (յուլիս), այլեւ նրան յաջորդած տիրակալներին տրուել է Կեսար = Կայսր պատւանունը: Այս օգոստոս կայսրից յետոյ էլ, ի պատիւ նրա, նախ՝ տարւայ ութերորդ ամիսն է անուանակոչել. անգլերէն August, ֆրանսերէն aout, գերմաներէն August:

Մեր նախնիներն իրենց ութերորդ ամիսը, որ համընկնում էր արդի մարտին, կոչել են բնիկ հայկական՝ հնդեւրոպական արեգ «արեգակ, արեւ» բառով՝ կամ խոր ձմեռանից յետոյ առաջին անգամ ջերմացնող արեւ տեսնելով, կամ էլ պայծառ արեգակի մասին երագելով... ■



Հումոր

- ⇒ Լսափողի միջից հնչում է կանացի մի զարթ ձայն:
 - Լսիր Ժիւկօ, ես ուզում եմ քեզ մի ուրախ լուր յայտնել. շուտով մենք երեխայ ենք ունենալու:
 - Հոյակապ է: Իսկ չէի՞ք ասի՝ ո՞վ է խօսում:
- ⇒ Մի Ֆրանսիացի բժշկից հարցնում է.
 - Մարդը կարո՞ղ է ապրել առանց կոյր աղիքի:
 - Մարդը կարող է, իհարկէ, բայց վիրահատող բըժիշկները՝ ոչ:
- ⇒ Մի երիտասարդ դիմում է սիրած աղջկայ հօրը.
 - Ես խնդրում եմ ձեր աղջկայ ձեռքը:
 - Իսկ դուք զրուցե՞լ էք իմ կնոջ հետ:
 - Այո, բայց եթէ դուք չէք առարկում, ես կը գերադասեի ամուսնանալ ձեր աղջկայ հետ:

Ասացուցքներ

- * Առաւօտեան ծառ տնկեց, կէսօրին ուզեց շաքուն հանգստանալ:
- * Եթէ սարում վագր չկայ, շանն էլ են անուանում արքայ:

ԱՖորիզմ

* Չար մարդիկ նման են այն ճանճերին, որոնք սողում են մարդու մարմնով և կանգ են առնում միայն նրա վերքերի վրայ:



Հանելուկ

Այն ինչ բան է, տեսքը սև, չունի մարմին, ունի ձև:

ժ. Լաբրիւեր

մզրտղ

Լեարդ

Լեարդը գտնուում է կրծքավանդակի աջ կողմում, ինչպէս նաև խոհարարական խամութները:

Մեծ քանակութեանը լեարդ են պարունակում ժողովրդական երգերը, բայց մշակուած վիճակում. «Ջիգ-տարս խորովել ես » «Ջիգետարս դաղ ես արել» և այլն:

Ամենաշատ վաճառք ունեցող գիրքը



Անգլիայի գրողներից տիկին Բարբարա Զարթլենդը մինչ այսօր 370 միլն. օրինակ իր վէպերից վաճառել է, որոնք քարգմանուած են եղել 17 լեզուներով: Եթէ այդ գրքերը շարուէր իրար վրայ, ապա 5000 անգամ աւել կը լինէր ԷՖեւ-

եան աշտարակի բարձրութիւնից:

Համար 6 խաչբառի լուծած տարբերակը

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	ձ	ո	վ	ս	է	ս	խ	ո	ր	ե	ն	ա	ց	ի	
2	ու	ր	ա	ր	տ	ու				լ	ա	յ	ն		ն
3	ր	ո	ր	ա		ղ	ա	ր	ա	ք	ի	լ	ի	ս	ա
4	ա	տ	ա		մ		է	ջ		ր		կ	ա	ր	
5	ց	ա	ն	կ	ա	պ	ա	տ		լ	ի	ա	ր	դ	
6	ա	լ	ե	ր	գ	ի	ա		ղ	ա		վ			ո
7	ն		լ	ե	ն	ա		ք	ու		մ	ա	ն	ա	ս
8				լ	ի		ս	ա		ս	ի	ս		ր	
9	մ		տ		ս	ա	ր	ղ	ա	ր	ա	պ	ա	տ	
10	ա	մ	ա	ն	մ	ի	ն	կ	ա	ն	ու		ա	մ	
11	տ	ո	ղ		ե	ն	ե	տ		գ	ր	ա	շ	ի	
12		լ	ա		մ	ո	գ							շ	
13	մ	ի	ր	օ		ր	ք	խ	ա	մ	կ			ս	ա
14	ա		ա		ղ	ա		ս		լ	ի	ա			ր
15	ս	ու	ն	ղ	ու	կ	ե	ա	ն		ց	ն	ո	ր	ք

Լազերի ճառագայթը բռնուն է

Պրոֆ. Ռ. Ա. Ղազարեան

Ասում են յուրաքանչյուր Երևանում,- սրտնեղեց Աշոտը:- Արդեն մթնելու վրայ է, իսկ տապը՝ ոնց որ կտօրին...

-Գոնե՛ Արագածի քամին փչէր, էլի փրկութիւն է,-վրայ բերեց Վարդանը:

-Փրկութիւնը քաղաքից փախչելն է,- ասելի բորբոքեց Աշոտը,-

շնորհակալ եմ քո եղ քամուց... Ասելի շատ փոշի է բերում, քան գովութիւն:

Տեսնում ես չէ՞ փողոցների «մաքրութիւնը»:

-Հայրս ասում է. «Թողնես, ճոռոմ-ճոռոմ հին մշակոյթից խօսեն, իսկ ծխախոտի մնացորդը մինչև աղբաման հասցնելը պատուից ցածր են համարում: Մարդ գետինն է մտնում օտարների առաջ»:

-Ճիշտ է, էլի,- համաձայնեց Աշոտը: Վազգէնիկը, որ ընդամենը վեց տարեկան լալկոտ է, մերոնց հետ երկու շաբաթ Գերմանիայում մնալուց յետոյ, ինձ յայտնում է. «Աշոտ, ինչո՞ւ են մերոնք այդքան անշնորհք... ես որ մեծանամ կը գամ Գերմանիա... Էնքան մաքուր եր... ու բոլորի քաղաքավարի...»: Մայրս էլ անելացնում է «անտառում սունկ էինք հաւաքում. քոքի կտոր, դատարկ տուփ. անգամ լուցկու հատիկ չտեսանք...»: Յետոյ ժպտալով, հօրս «յիշում ե՞ս, էն քերթի կտորը...» ու երկուսով ծիծաղում են: Պարզում է, մի անգամ ոտքի տակ ընկաւ լրագրի մի կտոր... հայրս ջրաքնուած չարախնդրութեամբ բարձրացրեց և... արագ խոթեց գրպանը սովետական էր: Մեր զբօսաշրջիկների կամ զինուորների հետքն էր:

Աշոտը մի պահ լռեց.- չգիտես, ի՞նչ պատասխան տաս երեխային... կատաղութիւնից վրան գոռոռացի: «Ես քեզ ցոյց կը տամ Գերմանիա գնալ... քիչ են դասալիքները, դու էիր պակաս»:

Ձայրոյթից Աշոտը կանգ առաւ ու շրջեց դէպի Վարդանը:- Ամառը պատասխան այցելութեան են գալիս գերմանացի մեր բարեկամները... մարդ չգիտի, թէ Սևանի ափի որ մասը տանի, որ չխայտառակի...
- Մի բոսլէ,- անսպասելի գոչեց Վարդանը՝ մեխելով տեղում,- հետս գալի՞ս ես Սևան:

- Ե՞րբ:
- Հէնց վաղը:
- Էդ ինչի՞ յանկարծ...
- Չէ որ հայրս իր լաբորատորիայով այնտեղ է. չափումներ են անում... դեռ մի քսան օր կը մնան:
- Ի՞նչ չափումներ...
- Ուսումնասիրում են լազերային փնջի տարածումը ջրի վրայով:
- Չե՞նք խանգարի,- տարակուսեց Աշոտը:
- Ընդհակառակը. մէկ-մէկ կը հերթապահենք խոհանոցում՝ գոհ կը լինեն. իրենց ձեռ ու ոտը կազատենք: Բայց մի պայման՝ ապրելու ենք վրանում:
- Հիանալի գաղափար,- հրճեց Աշոտը:



- Հա, մի պայման էլ չնռանամ. հօրս մօտ... «ցենար», «գծական» և այդպիսի այլ բառեր մտքիցդ հանիր՝ վայն եկաւ, երկուսիս տարաւ:

- Դի՞շտ...

- ճիշտ: Իսկ հիմա բաժանում ենք՝ առաւօտեան 8-ին՝ արտօկայանում: Տաք շորեր վերցրու, երեկոները մէկ-մէկ բերանիդ գոլորշին երևում է...

Աստղուսը համարեա լցեց: Աշոտը մի պահ բարձրացաւ տեղից ու մօտեցաւ հակառակ կողմի պատուհանին. ծանօթ դէմք թուաց փողոցում: Ամմիջապէս մօտեցաւ մի պատանի .

- Ջանիտ ա՛,- դիմեց նա Վարդանին, ցոյց տալով ազատ տեղը:

- Ոչ զբաղած է,- չոր կտրեց Արամը: Պատանին հանգիստ նստեց Աշոտի տեղը:

- Ես ասացի զբաղած է, ընկեր ջան:

Պատանու գիտակցութեանը նոր հասաւ իմաստը:

- Արա՛, դէ հայերէն ասա հասկանանք,- սրտնեղեց նա:

- Ներդուքիւն, ձեր հայերէնին չեմ տիրապետում,- թունոտ քաղաքավարութեամբ խայթեց Վարդանը: Աւտոբուսում ծիծաղեցին:

- Է՛- Է՛- Է՛,- հառաչեց մի տարեց մարդ,- ո՞վ է հիմա շնորհքով հայերէն խօսում...
- Իսկ ո՞վ է արգելում... խօսեք, է՛լի,- նեարդայնացած արձագանքեց միսը:

- Իսկական բանավէճ բացեցիր,- նկատեց Աշոտը, տեղադրելով կողքին:

- Հօրս ներշնչանքն է,- մեղաւոր ժպտաց Վարդանը,- չես պատկերացնում, ոնց է զայրանում էդ տեսակ աղաւաղած մեջքերումներից: Մի անգամ միջքաղաքայինում քիչ էր մնում ծեծի մի ջահելի, որը հեռախօսով գոռում էր իր ազգականին՝ «չամառանը դասալիքներդն արե՞ցով են դրկում...»:

- Տօ՛, թշուառական,- յարձակեց հայրս,- լեզուդ կըչորանա՞ր, եթէ ասելի «ճամպուրկը լրացուցիչ գնացքով են ուղարկում»:

- Այ մարդ, շատ ե՞ս,- շշմեց ջահելը:

- Ըսա՞ր դո՛ւ ես, որ գռնեկացնում ես լեզուս... զոնե՛ ճիշտ արտասանեն,- չէր հանգստանում հայրս, դիմելով շուրջը,- անգրագէտ ռուսերէնով «կը փայլեն», միայն թէ հայերէն չլինի:

- Հակառակի պէս,- շարունակեց իր պատմութիւնը Վարդանը,- ջահելի ընկերը քաշեց ընկերոջ թեւից, թէ «գնանք, պերերիւր պրծնում ա»:

- Մի տե՛ս, - նորից բորբոքեց հայրս,- սպանես «ղի» տառը ճիշտ չի արտասանի, բայց մտքով չի անցնի՝ «ընդմիջում» գործածի...

- Մի խօսքով,- ժպտալով ասարտեց Վարդանը,- հազիւ հանգստացրի... կայծակներից մէկն էլ ինձ վրայ լիցքաթափեց. «քո բերանից լսել եմ այդպիսի մի հատիկ բառ՝ լեզուդ կը կտրեն»: Բայց հետաքրքիր բան... առաջ չէի նկատում... հիմա, որ ուշադրութիւն են դարձնում, զգում եմ, թէ ինչքան ականջ ծակող ու տգեղ են հնչում ուրիշի բերանում:

Գիտարշաւարանը՝ գեղեցիկ ժայռակատարով խըճուրղոց մեկուսացած ափի մի հատած էր: Տարբեր չափերի և գոյների մի քանի վրան ու փայտեայ հասարակականապարտադրիս: Ամենամեծ վրանը՝ խոհանոցն ու

Երիտասարդի համար

ճաշարանն էր: Մի փոքր մեկուսացած՝ կոկիկ գուգարանն էր:

- Տղաներն են մշակել ու պատրաստել ինստիտուտի արհեստանոցում,- բացատրեց Վարդանը, մատնանշելով փայտեայ տնակը:- Մի ժամում հուաքում են, գնալուց՝ քանդում տանում: Ուրիշ կերպ չի լինում: Նախանցեալ տարի մշտականը սարքեցին, էլի փայտեայ յաջորդ ամառ միայն բետոնե հիմքը գտան:

- Այս ի՞նչ գուց է:

- Բենզոլազրեգատն է, էլեկտրասնունն է սպահովում... լաբորատորիայի և խոհանոցի: Վրաններում էլեկտրական լապտերիկներ:

- Էստեղից ճառագայթը գցում են, բա ընդունողն ո՞վ է,- հետաքրքրեց Աշոտը:

- Միս ափին՝ Անդրանիկն ու Վահեն: Իսկ նոր առաջացած է-է-է-ն թերակղզին տեսնո՞ւմ ես... այնտեղ էլ Ալեքսանն է նստած ուսանողի հետ:

- Ինչո՞ւ են երկու կէտում ընդունում:

- Որ տարբեր հեռադասարանների վրայ ուսումնասիրեն:

- Լսիր, մի կարգին բացատրի՝ ի՞նչ են ուսումնասիրում,- չդիմացաւ Աշոտը:

- Աւելի լաւ չի՞ լինի գնանք լաբորատորիա, տղաներին խօսեցնենք:

- Կը խանգարենք...

- Ո՛չ, դեռ հաղորդումը չեն սկսել՝ նախապատրաստ-ում են:

Հենց այդ պահին լուեցին մետաղեայ հարածների տհաճ ձայներ: Գազիկն էր, քարով հարածում էր լարից կախած մետաղակտորին: Առանձնապէս չվստահելով այդ ինքնասարք կոչնազանգին, նա, միաժամանակ բարձր բղաւեց

- Բոլորի՛ն, բոլորի՛ն, բոլորի՛ն... կերը պատրաստ է, շտապեցե՛ք, սպեշիտ! 1, քամ քուկ! 2:

- Օ՞՞օ՞՞,- երկարացրեց Վարդանը,- Գազիկը լեմինգրադցի Վալերիի հետ է հերթապահում:

«Կերը» առատ էր ու բաւական համեղ. համեմայն դէպս ճաշարանների ճաշերից անհամեմատ ավտորժելի:

- Վալերիի շնորհքն է,- տեղեկացրեց Վարդանը:- Գազիկին որ մնար, իսկական լափ կուտէինք:

- Ես խորապէս վիրաւորած եմ,- բեմական կեցածք ընդունելով յայտարարեց Գազիկը,- և ինձ բաւարարած կզգամ, միայն այն ժամանակ, եթէ այդ մեծախօսը վաղը հերթապահի,- դիմելով Վարդանի հայրիկն վերջացրեց նա:

- Անշուշտ,- ընդունելով Գազիկի տոնը հանգիստ արձագանքեց հայրիկը:- Չարախօսութիւնը պէտք է պատժի: Վաղը երկուսով կը հերթապահեն,- նա գլխով արեց տղաների կողմը,- տեսնենք, ի՞նչ կը մատուցեն:

- Կերա՞ր,- չարախնդաց Գազիկը:

- Ես, այո՛,- պատրաստակամութեամբ արձագանքեց Վարդանը,- տեսնենք դու վաղը ո՞նց կուլ կը տաս:

- Դու որեւէ բան գիտե՞ս պատրաստել,- անհանգրստացաւ Աշոտը:- Ես՝ միայն ձածեղ:

- Ռիը՛քս, ինչպէս ասում են ամերիկացիք, այսինքն, հանգիստ՝ ուշքի արի, մի բան կը մտածենք,- հանգստացրեց Վարդանը:

Մինչև տղաները կանգնեցին իրենց երկտեղանոց վրանը և հարմարեցրին քնապարկերը՝ մութն ընկաւ: Աշոտը միացրեց լապտերիկը և զարմացած գոչեց.

- Կորանք, տես ինչ հսկայ մոծակներ են լցւել վրանը... դրանք մեզ կուտեն գիշերը:

- Բողոքովին չանհանգստանա: Չնայած իրենց սպառնալից տեսքին, դրանք ամենեւին կծան չեն: Վախեցիր մանրերից, բայց այստեղ բարեբախտաբար այդպիսիք չկան: Իսկ հիմա գնացինք լաբորատորիա,- ասարտեց Վարդանը՝ դուրս սողալով վրանից:- Օ՛-օ, շուտ դուրս արի,-բացականչեց նա: Աշոտը հետեւեց նրան և նայեց Վարդանի մատնանշած կողմը: Լաբորատորիայի պատուհանից դէպի միս ափ դուրս էր ձգւել բարակ կարմիր թել-ճառագայթ: Հեռում նա հետզհետէ լայնանում էր ու լուծում օդում: Գեղեցիկ էր: Աշոտը դիւրսած հաւաքքը յառել էր ճառագայթին: Այն նկատելի թրթռում էր, մէկ-մէկ էլ փնջի մէջ ինչոր կէտեր էին առկայծում:

- Միմոնն ասում է, որ մաքուր օդում ճառագայթն այսպէ՛ս կողքից չես տեսնի: Միայն, երբ ճիշտ աչքերիդ մէջ ընկնի... այդ դէպքում այնքան պայծառ է, որ կուրացնում է լուսարձակի պէս:

- Ընդմիջտ է կուրացնո՞ւմ,- անհանգստացաւ Աշոտը:

- Ոչ, այս լազերինը թոյլ է՝ վտանգաւոր չէ: Իսկ այսպէ՛ս կողքից,- շարունակեց Վարդանը,- այն երեսում է, երբ ցրում է օդում կախած փոշու հատիկների կամ ջրի մանր կաթիլների վրայ:

- Հիմա կաթիլների վրայ՞ է ցրում:

- Այո: Այստեղ, ջրի վրայ, փռչել չկայ:

- Իսկ առկայծող կէտե՞րն ինչ են:

- Միջատներն են յատուկ փունջը:

- Այրու՞մ են:

- Ոչ, պարզապէս անդրադարձնում են լազերի լոյսը: Ասացի, չէ՞, էս լազերը թոյլ է՝ սովորական 40 վատանոց լամպից հազար անգամ թոյլ:

-Բա, էլ ո՞նց է մինչէս միս ափ տարածում... Առնուազն 10-15 կիլոմետր կայ:

-Ոչ միայն միս ափ,- Վարդանը գոհ էր, որ կարող է այդ բաները բացատրել,- հայրս ասում է, որ եթէ չլինէր մթնոլորտը, այդպիսի թոյլ լազերը կարող էր կապ սպառնալի ամենահեռաւոր մոլորակի հետ, իսկ յատուկ ոսպնեակներ կիրառելիս՝ անգամ մօտակայ աստղերի հետ:

-Ինչ որ գլուխս չի մտնում,-տարակուսեց Աշոտը:- Արեւի չափ աստղերը հազիւ են երեսում երկնքում, իսկ էս... սասուկած մոծակը...

- Աստղը շուրջ բոլորն է լոյս սփռում, -յանկարծ հետեւից խօսեցնէր: Տղաները շուտ եկան՝ Գերմանն էր, աննկատ մօտեցել էր մթութեան մէջ:

-Իսկ լազերը, տեսնո՞ւմ ես,- նա ձեռքով արեց դէպի օդում կախած կարմիր թելը, շատ նեղ թելանման փնջով է տարածում: Պատկերացրու, ուզում ես, մեծ մութ դահլիճում, պատին կպցրած քարտեզի վրայ գտնել ինչ-որ քաղաք: Կարելի է երկու ձևով վարել. կամ կախել դահլիճում հսկայական ջահ, լուսատրեխ միայն թեզ հետաքրքրող պատի հատուածը: Առաջին դէպքում ծախ-

1- Շտապեցե՛ք (ռուսերէն)

2- Շտապեցե՛ք (անգլերէն)

Երիտասարդի համար

սեցիր կիրովատեր, երկրորդում՝ վատի տասնորդական մասերով լուծեցիր դրամ խնդիրը: Հասկացա՞ր:

- Այո, - ուրախացաւ Աշոտը:

- Բայց դա դեռ հարցի մի կողմն է, - շարունակեց Գեորան... և անվստահ կանգ առաւ: - Չէ, այդ մասին չարժէ, չեք հասկանայ: Յետաձգենք մէկ տարով՝ երբ 10-րդը ասարտէք - կը շարունակենք մեր գրոյցը:

- Գեոր, - ընդհատեց Աշոտը, - իսկ ինչո՞ւ Վարդանի հայրը ասում է « Եթէ չլինէր մթնոլորտը... »:

- Որովհետեւ մթնոլորտը բաւականին փչացնում է լազերային փունջը՝ ճոճում է նրան, լայնացնում, թուլացնում և այլն: Մենք հենց դա ենք ուսումնասիրում: Դէ, լա, շատ խօսեցինք... գնանք լաբորատորիա, Միմոնը վաղուց այնտեղ է: Ի միջի այլոց հետաքրքիր գործիք ենք ստացել... ձեզ համար լա խաղալիքի տեղ կանցնի, - ժպտաց նա:

Միմոնն առաջօհեռախօսով ընդունում էր Վահէի ցուցումները միւս ափից և փորձում ուղղորդել լազերի ճառագայթն այնպէս, որ նա այնտեղ՝ միւս ափում, ընկնի ընդունիչի ռապեակի վրայ: Այնքան էլ հեշտ գործ չէ, եթէ հաշի առնենք, որ մինչև միւս ափ ճառագայթը լայնանում է ընդամենը կէս մետր: Սովորաբար այդ գործողութիւնը երկուսով են կատարում: Միմոնը խոժոռ հայեացք գցեց ներս մտնող Գերմանի վրայ, բայց, տեսնելով տղաներին, ոչինչ չասաց: Գերան աննկատ աչքով արեց տղաներին:

- Միմոն, ի՞նչ ես կարծում, տղաների գլխին չհագցնենք գիշերային տեսուակութեան սաղաւարտը:

- Չէր խանգարի նախ քո գլխին հագցնել, - չղիմացաւ Միմոնը, - մթութեան մէջ դժարութեամբ ես գտնում լաբորատորիայի ճամփան:

- Ընդունա՞ծ է, - ծիծաղեց Գերան և մօտենալով Միմոնին, իր ձեռքը վերցրեց լազերի ուղղորդումը: - Մի քիչ սպասէք, տղաներ, - խնդրեց նա, - վերջացնենք՝ տամ:

Տղաները նայեցին պատուհանից դուրս. անլուսին գիշեր էր, մութը՝ խիտ, շուրջը ոչինչ չէր երևում, միայն լսում էր թեթեւ ակնոծող լճի աղմուկը: Եւ, պատուհանից, մթո-թեան մէջ կախուած կարմիր ասեղ-ճառագայթը:

Գիշերային տեսուակութեան գործիքը շատ էր նման տանկիստի սաղաւարտին, միայն ակնոցների փոխարէն ինչ-որ սարք և, կողքից ձգուած էր էլեկտրական քուղը: Ինչպէս պարզեց, այն հենց նախատեսուած էր ռազմական պայմաններում տանկերի և զրահամեքենաների գիշերային փոխադրման համար:

Գերան առաջարկեց մէկն ու մէկին դնել սաղաւարտը: Վարդանը մեծառոգաբար զիջեց Աշոտին:

- Տեսնո՞ւմ ես որևէ բան, - հարցրեց Գերան:

- Ոչինչ:

- Հիմա միացնում եմ սնումը:

- Օ՛օօ, - Աշոտի բացականչութեան մէջ կային զարմանք ու հիացմունք:

- Հը, ի՞նչ ես տեսնում, Աշոտ, - նրա թևից անհամբեր քաշեց Վարդանը:

- Հիմա, հիմա, հի՛մմմմա... ամէն ինչ սպիտակ-կանաչաւուն է ու մի քիչ տձև...

- Տուր տեսնեմ, Աշոտ ջան, - չհամբերեց Վարդանը:

Աշոտը ճիշտ էր նկարագրել. մթութեան մէջ նշմարող առարկաները սպիտակ-կանաչաւուն էին՝ անկայուն ուրագծերով: Ահա... այն վրանը՝ խոհանոցն է... այժմ դանդաղ իջնենք դէպի ա՛ափ... առափնեայ քարերն են

սպիտակ-կանաչաւուն էին՝ անկայուն ուրագծերով: Ահա... այն վրանը՝ ... ալիքները... իսկ այն ի՞նչ է շարժում... ա՛աա, նաւակ ... մօտեցաւ ափին... մէկը միջից դուրս է գալիս ափ... Պարզ է՝ էլի ձկնզող... թէև հայրս արգելել է այստեղ զբաղել դրանով. «Իսկ եթէ պայթուցիկ նիւթ էք օգտագործել՝ կը զանգահարեն ուր որ պէտք է», սպառնացել է նա:

- Միմոն, - ձկնզող ափ իջաւ:

- Ապա տուր, շո՛ւտ արա, - Միմոնը հագաւ սաղաւարտը և նայեց Վարդանի նշուած ուղղութեամբ:

- Այդպէս էլ կայ, - սրտնեղեց Միմոնը:

- Գեոր, մի տաս քապէանոց ընդմիջում հաղորդիր Վահէին, փորձենք դրան խրատել:

Միմոնը մօտեցաւ լազերին, և, նայելով պատուհանից դուրս, սկսեց ճառագայթն ուղղել նաւակի կողմը:

- Այդպէ՛էս, այդպէ՛էս, - քրքմնջում էր նա քթի տակ:

- Ապա կիզակտից գցիր, թող փունջը լայնանայ, - ձայն տուց Գերան:

- Ըհ՛ 222տ է... մի քիչ է՛լ... հիմա՝ պատրաստել... խփում ենք ուղիղ աչքերի մէջ: Ա՛աա, շշմեցի՛ր, խխալէրս:

Տղաները պատուհանից հետևում էին ճառագայթի շարժմանը: Այն բաւականին լայնացել էր ապակիզակտման շնորհիւ այնպէս, որ երբ ընկաւ ձկնզողի վրայ, լուսաւորեց նրան ոտքից գլուխ: Վերջինս քարացաւ տեղում: Ինչ-որ բան պահել էր տարածուած ձեռքերում: Գերմանը դուռը բացեց ու գոռաց՝

- Հապա մօտեցի՛ր:

Ձկնզողը զգուշօրէն, կոյրի նման, առաջ շարժեց: Եթէ դուրս էր ընկնում ճառագայթից, Միմոնը տեղն եւ տեղը նորից ուղղում էր վրան: Երբ մինչև լաբորատորիա մնում էր մի քանի քայլ, տղաները տեսան, որ ձեռքինը ցանցկէն տոպրակ էր, մի քանի ձկններով:

- Ներս արի, - հրամայեց Գերան: Բայց մարդն այնքան էր շշմել ու կուրացել, որ տեղից չշարժեց: Գերան դուրս եկաւ ու ձեռքից բռնած ներս քաշեց նրան: Երիտասարդ տղայ էր: Ապուշ կտրած ճպճպացնում էր աչքերը: Դեմքն անծանօթ էր՝ մօտակայ գիւղից չէր:

- Դէ ի՞նչ, շէՖ, - Գերան շինծու մտայութեամբ դիմեց Միմոնին, միաժամանակ աննկատ աչքով անելով նրան, - զանգահարենք գա՞ն:

- Ո՛ր, - ուշքի եկաւ ձկնզողը:

- Ուր որ պէտք է, - չոր կտրեց Միմոնը: - Բաւական չէ գողութեամբ են զբաղում, խանգարում աշխատանքը... մի բան էլ պատահի, գնա՛ պատասխան տուր:

- Դու ասա, լա է, որ են ենթակարմիր լազերը չէինք միացրել, - ընդունելով նրա տոնը՝ շարունակեց Գերան: - Պատկերացնո՞ւմ ես...

- Ի՞նչ կը լինէր տղէք ջան:

- Այն կը լինէր, որ կը քոռանայիր, - մտայլ տեղեկացրեց Միմոնը: - Ընդ որում չէիր էլ զգայ՝ ոնց պատահեց... Անտեսանելի ճառագայթ է...

Վարդանը գիտէր, որ այդպիսի լազեր լաբորատորիայում չկայ, այն մնաց ինստիտուտում: Հազիւ էր զսպում ծիծաղը՝ հետևելով տղաների «ղերասանութեանը»: Աշոտը՝ Վարդանի դէմքի արտայայտութիւնից նոյնպէս կռահում էր իրողութիւնը: Միայն խեղճ ձկնզողն էր ահաբեկուած նայում մէկ սրան, մէկ նրան:

Շար. տեսնել էջ 13-ում